

1835

ՍՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐԲ No 3

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ՊՐԱԿ Բ.

1. ՈՒՏՈՊԻԱԿԱՆ ՅԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ
2. ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ
3. ՓԱՐԻՋԻ ԿՈՄՄՈՒՆԱՆ՝ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹԱՐԳՄ. ԱՆ. ՂԱԶԱՐՅԱՆ

9(42)

F-27

ԹԻՖԼԻՍ

1928

322

R-27

ETUS 9AM

30 MAY 2011

№ 3 ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐԲ № 3

323.2/075

ՈՅՄԻՐ ԲՈՅՆՉՆԱԳՐՈՒՄ Կ.Ս.Ս.Ր.
Պ.Ո.Յ. № 643 3



ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՅԵՎՐՈՊԱՅՈՒՄ

ՊՐԵՍ Բ.

1. ՈՒՏՈՊԻԱԿԱՆ ՅԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ
2. ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ
3. ՓԱՐԻԶԻ ԿՈՄՄՈՒՆԱՆ՝ ԱՌԱՋԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ԹԱՐԳՄ. ԱՆ. ՂԱԶԱՐՅԱՆ

ԹԻՖԼԻՍ

1928

1848—1928

ՄԱՐԲՍԻ ՅԵՎ ԵՆԳԵԼՍԻ

«ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՄԱՆԻՖԵՍՏ»-Ի

80-ԱՄՅԱԿԻՆ

նվիրում է սիրով բարգմանիչը

ՔԱՐԳՍԱՆԵԼ ԵՄ՝

«Рабочая книга по обществоведению» VI-րդ գրքեց, վորը կազմված է «Под общим руководством подсеции подростков научно-политической секции Г.У.С.» I և II հոդվածների հեղինակն է Ս. Մ. ՄՈՆՈՍՈՎ, իսկ III-դ հոդվածինը՝ Վ. Վ. ՊԵՏՐՈՎԱ: ԱՆ. ՂԱԶԱՐՅԱՆ



43 010-63

§ I. ՈՒՏՈՊԻԱԿԱՆ ՅԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻԶՄ

XIX դ. սկզբի սոցիալ-լիբերալ գաղափարները և իրենց հետևողները արդյունաբերության զարգացումից աշխատավորներին հասած դժբախտություններն ու թշվառությունները ստիպեցին շատերին խորհել այն մասին, թե մարդկային հասարակությանն ինչպես ազատեն կապիտալիզմի զարգացման խորտակիչ բոլոր հետևանքներից: XIX դ. սկզբին Անգլիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում յերևան են գալիս հասարակության սոցիալիստական վերաշինման մասին ուսմունքներ: Նման ուսմունքի հեղինակներից մեկին մենք արդեն գիտենք. դա, 1848 թ. հեղափոխության գործիչ, Լուի Բլանն էր:

Սոցիալիզմ սոցիալիստական ուսմունքի ամենահայտնի հեղինակը Ռոբերտ Ուեբերն էր: Ինքը, լինելով արհեստավորի ընտանիքից, արդյունաբերական հեղաշրջման հետ կապված յերեվույթների ակնհասեան յեղավ: Խոշոր արդյունաբերության մեջ աշխատող բանվորների նկատված վայրենի բարքերից, այն ժամանակվա բանվորների կյանքը լցնող անսթափ արբեցողությունից, հայտնյանքներից և կոռիպսերից նա շվարել էր:

Ռոբերտ Ուեբերը հասկացավ, վոր բանվորների նման վարքը կախված էր տնտեսական այն սոսկալի պայմաններից, վորոնց մեջ նրանք ապրում էին: Վերջնականապես այդ բանում նա համոզվեց այն ժամանակ, յերբ Նյու-Լամարկում, դեռ ևս չհանել ժամանակ, դարձավ մի բամբակի ֆաբրիկայի կառավարիչ: Լավացնելով այդ ֆաբրիկայի տաժանելի ընթիմը՝ բանվորական սրվա կրճատումով, աշխատավարձի հավելումով, անգամ վարձատրելով և

այն ժամերը, յերբ Ֆարբիկան ստիպված եր աշխատանքները դադարեցնել—նա տեսավ, թե ինչպես փոխվեց բանվորների բարոյականութիւնը, նրանց ժամանցը, նրանց վերաբերմունքը դեպ իրար և նրանց շահերը:

Այսպիսով Ռոբերտ Ուենն այն մտքին հանգեց, թե անհրաժեշտ է փոխել այն հասարակական կառուցվածքը, վորի մեջ մարդը դատապարտված է վայրենութեան և աղքատութեան:

Ամբողջ հասարակութիւնը վերաշինելու համար, Ուենն առաջարկում եր կազմակերպել կոմմունիստական համայնքներ, վորոնց մեջ պիտի գոյութիւն ունենային «ամբողջ հողերի, տների և ուրիշ բոլոր անշարժ կայքերի, ինչպես և բոլոր գործիքների և արդյունաբերութեան համար հում նյութերի վերաբերմամբ հանուրի սեփականութիւն»:

Ուենը յենթադրում եր, վոր հասարակութեան նման վերաշինութեան ժամանակ, հարստութեան անհամաչափ բաշխումը կամ անձնական կուտակումը կդառնար «ուռնաքան անմիտ, վորքան ջրի կամ ողի անհավասար բաշխումը»:

Ժամանակի ընթացքում այս համայնքները պիտի կազմեյին ամբողջ աշխարհն ընդգրկող մի ընդհանուր միութիւն: Նրանցից յուրաքանչյուրը կարտադրեր իր անդամների համար բոլոր անհրաժեշտ նյութերը, իսկ հավելումները կփոխանակեյին ուրիշ համայնքների արտադրած հավելումների հետ: Ուենն ընդունում եր, վոր կոմմունիստական հասարակութեան մեջ մեքենաների գործածութիւնն անսովոր զարգացման կհասնի:

Գալով այն միջոցներին, վորոնցով կարելի կլիներ իրականացնել նոր հասարակութեան փոխանցումը, Ուենն կարծում եր, վոր «աշխարհը դիտե և զգում է գոյութիւն ունեցող շարիքը և, առաջարկված նոր կարգերի հետ ծանոթանալով, նա կվավերացնի, կցանկանա փոփոխութիւնը և այդ բանը կանվի»: Դրա համար ել նա ա-

ռաջարկում եր միմիայն պրոպագանդ անել և, առանձնապես, որինակով համոզել: Այդ նպատակով Ուենն Ամերիկայում կազմակերպեց կոմմունիստական համայնք: Այդ համայնքը, կապիտալիստական աշխարհում լինելով մի վորբիկ կղզի, մի քանի ժամանակից հետո խորտակվեց:

ՇԱՐԼ ՖՈՒՐԻԵՆ ՅԵԿ

Կապիտալիզմի աճման պատկերը նույնքան տգեղ եր Ֆրանսիայում, վորքան և՛ Անգլիայում: Գլխերի հարստութեան աճը, մասսաների աղքատացումը, աշխատանքի սոսկալի պայմանները—այս բոլորը ստիպում էյին Ֆրանսիական մտածողներին հասարակութեան վերաշինման համար նախագծեր մշակել:

Նման մի նախագծի հեղինակ եր Շարլ Ֆուրիեն (1772 — 1837 թ. թ.): Նա ուշադրութիւն դարձրեց, զբլխավորապես այն կովի և մրցման վրա, վորոնք կապիտալիստական հասարակութեանն ուտում են ներսից: Ամեն մեկն իրեն յերջանկութեանն է ձգտում, վորը հիմնված է ուրիշի դժբախտութեան վրա. այսպես որինակ՝ բժիշկը ցանկանում է, վոր շատ հիվանդներ լինեն, իրավաբանը՝ վոճրագործութեաններ շատ լինեն, իսկ ճարտարապետը՝ տներ շատ քանդվեն: Մրցման անսահման ազատութիւնը ավերացնում է մի խումբ պորտաբույծների հարստութիւնները, իսկ աշխատավոր մասսան ել ավելի յե խըրվում աղքատութեան անդունդի մեջ: Աշխատանքի ներկա պայմաններում ամեն մի գործ դառնում է տանջանք ու պատիժ, մինչդեռ նա կարող եր լինել հրճվանքի և ուրախութեան աղբյուր. դրա համար պետք է վերափոխել հասարակութիւնը և ստեղծել համախմբումներ, վորոնց մեջ մանեյին 400-ից մինչև 2.000 մարդ: Աշխատանքները սրանց մեջ պիտի կազմակերպվեն կոմմունիստական ըսկզբունքներով, իսկ գյուղատնտեսութիւնը պիտի միացրնվի արդյունաբերութեանը: Յուրաքանչյուր նման համայնք—Ֆալանգա, ինչպես նրանց անվանում է Ֆուրիեն, կտեղավորվեր շքեղ պալատում իր զպրոցով, ահումբով,

գրադարանով և ժամանցի սրահներով: Փուրիեն մանրամասնություններին հասնող շատ ճշտությամբ նկարագրում է այդտեղ ապրող յերջանիկների և պալատը, և կյանքը: Աշխատանքն այնպես կազմակերպված կլինի, վոր կը համապատասխանի յուրաքանչյուրի ցանկություններին և ընդունակություններին, վորտեղ ամբողջ որվա ընթացքում ամեն մինը կարող է փոփոխել իր աշխատանքը անցնելով մեկից—մյուսին: Կապիտալիստական հասարակության մեջ ուրիշները դեմ մղված կռիվներն ու իրար կրծոտելու խանդն ու ցանկությունները այդ հասարակության մեջ, յենթադրում է Փուրիեն, կոզտագործվեն մրցման մեջ աշխատանքի լավագույն հետևանքների նվաճումների համար:

Փուրիեն Փալանդներ՝ նոր հասարակության բջիջներ, կազմակերպելու համար ցանկացավ դիմել հարուստներին, իշխանություն ունեցող մարդկանց: Նախագծելով կոմունիստական կարգեր, այնուամենայնիվ, նա ցանկացավ յերաշխսավորել ամենահարուստ մարդկանց վորոշ ոգուտ Փալանդների կազմակերպություններ առաջացնելու գրամապլանների համար: Չեր մոռանում նաև դիտնականներին. ուստի Փալանդում արտադրած բոլոր մթերքները պիտի բաշխվեյին այսպես՝ $\frac{5}{12}$ աշխատավորներին, $\frac{4}{12}$ գրամապլանին, $\frac{3}{12}$ տաղանդավոր և հնարագետ մարդկանց:

Ուուենի և Փուրիեյի ուսմունքների համեմատ գերմանական սոցիալիստ Վեյտլինգի (1808—1871 թ. թ.) վարդապետությունը վորոշ հառաջադիմություն է ներկայացնում: Լինելով աղքատ արհեստավոր՝ դերձակ, նա Փուրիեյից և Ուուենից լավ եր հասկանում, վոր հարուստ և իշխանություն ունեցող մարդիկ ամենևին շահագրգռված չեն գոյություն ունեցող կարգերի փոփոխմամբ: Փուրիեյի ուսմունքից վերցնելով շատ բաներ, այնուամենայնիվ, նա համոզված էր, թե կոմունիստական համայնքը պիտի աղքատների

համայնք, աշխատավորների կոմուննա լինի: Նա հույս չուներ բուրժուազիայի իմաստությունից և արդարության զգացումից և պնդում էր, թե աղքատները կարող կլինեն իրենց ազատագրել ապստամբության միջոցով. միայն թե, նա մեծ սխալ եր գործում համարելով ապագա մարդկության լավագույն մարտիկներ վոչ թե արդյունաբերական բանվորներին՝ պրոլետարիատին, այլ՝ քամբազդներին, աղքատացածներին, հուսահատներին, տկլորներին (բոսյակ), անգամ գողերին և ավազակներին:

Մեր հենց նոր պատմած բոլոր ուսմունքներն առաջացել էյին կապիտալիզմի զարգացման հետ աշխատավոր մասսաների գլխին թափված թշվառությունների և դժբաղդությունների ազդեցությունների տակ: Ուսմունքները թելադրվել էյին առաջին հերթին դեպի աշխատավոր մասսաներն ունեցած համակրանքից և ցավակցությունից: Այնուամենայնիվ, առաջարկությունների իրականացման խնդրում նախագծի հեղինակներն իրենց հույսերը չեյին դնում աշխատավորների ինքնագործունեյության վրա. այս բանն առաջանում էր նրանից, վոր այն ժամանակվա բանվորներն անկազմակերպ էյին, իրենց շահերի համար վատ էյին կրավում և ավելի շուտ ցավակցություն և համակրանք էյին ներշնչում, քան թե՛ հավատ, թե նոր հասարակության ստեղծողն իսկապես պրոլետարիատն է: Ուստի Փուրիեյից է Ուուենից այդ հարցում տարբերվող անգամ Վեյտլինգը հույսեր չեյր տածում դեպի իսկական պրոլետարները: Յեվ դա զարմանալի չե. պրոլետարները, առանձնապես Գերմանիայում, թվով շատ էյին փոքր: Այն ժամանակվա սոցիալիստները չեյին կարողանում հաստատել կոմունիզմի անխուսափելի մերձեցումը և հույսերը դրնում էյին տիրող դասի առանձին ներկայացուցիչների մեծահոգության և բարեսրտության վրա:

Այդ եր պատճառը, վոր Ուուենը իր նախագծերով դիմում էր կառավարությանը, իսկ Փուրիեն յերկար տա-

ՈՌԻԵՆԻ, ՖՈՒՐԻԵՅԻ ՅԵՎ
ՎԵՅՏԼԻՆԳԻ ՈՒՍՄՈՒՆԷ-
ՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ: ՈՒՏՈՊԻԱԿԱՆ
ՍՈՑԻԱԼԻՉՄ:

ըրկների ընթացքում ամեն որ սպասում եր մի կամուրջի վրա, թե վորեւ հարուստ նրան կղիմի առաջարկելով ֆալանգների կազմակերպության համար իր գերամազլուխը:

Այն ժամանակվա սոցիալիստները, հույս չունենալով աշխատավորների իրենց նախաձեռնութիւնից, իրենց նախագծերի իրականացումն ել չեյին կապում հեղափոխական շարժման աճի և իրենց դրութիւնը բարելավելու բանվորների կովի հետ: Նրանք գծում էյին իրենց յերևակայութիւնն ուժի գորութիւնը, թեև շատ գրավիչ, բայց սպազա կոմմունիստական հասարակութիւն կարգերի բոլորովին յերևակայական պատկերներ:

Նման սոցիալիստական ուսմունքները կոչվում են ուտոպիական:

Նրանց գլխավոր յերախտիքը նրանումն է կայանում, վոր նրանք լավ են նկարագրել կապիտալիստական հասարակութիւնն բոլոր պակասութիւնները և ցույց են տվել, վոր այդ բոլոր պակասութիւնների վերացման համար անհրաժեշտ է կոմմունիստական հիմունքներով հասարակութիւնն վերաշինումը:

Հարցեր յեվ հանձնարարություններ

1. Ինչո՞ւն է կայանում Ռոբերտ Ուենի ուսմունքը և ի՞նչ միջոցներով եր նա ուզում իրականացնել իր հայացքները:
2. Շարլ ֆուրիէյի ուսմունքի բովանդակութիւնն ի՞նչ է և վորո՞նք են այն միջոցները, վորոնց ոգնութիւնը նա հույս ուներ կյանքում իրականացնել:
3. Ինչո՞ւն է կայանում Վեյալինգի ուսմունքի առանձնահատկութիւնը համեմատելով Ուենի և ֆուրիէյի վարդապետութիւնների հետ:
4. Կազմեցե՞ր հետևյալ թեմայով զեկուցում՝ «Սոցիալիստական ուսմունքների առաջանալու պատճառները XIX դ. և նրանց առանձնահատկութիւնները»:

Սոցիալիստ - ուտոպիստների ուսմունքն ուներ և այն նշանակութիւնը, ՍԱՐՔՍ ՅԵՎ ԵՆԳԵԼՍ վոր նա հեշտացրեց գիտական սոցիալիզմի ստեղծող Մարքսի (1818—1883 թ. թ.) աշխատանքները, մի ուսմունք, վորն այն ժամանակվա առաջավոր երկրների տնտեսական աճի խորն ուսումնասիրութիւնն և բուն քանվորական շարժման գիտողութիւնների հետևանքն է:

Մարքսը Գերմանիայի տնտեսական տեսակետից ամենագարգացած Ռեյնի շրջանիցն եր. այստեղ նա փոքր հասակից կարող եր դիտել խոշոր արդյունաբերական ձեռնարկութիւնների գործունեյութիւնն ու կյանքը: Համալսարանը վերջացնելուն պէս, դեռ ևս շատ ջանել, Մարքսը դարձավ իր ծննդավայրի բուրժուական առաջադեմ թերթի խմբագիրը, վորը համարձակ կովում եր ազնվական և միապետական Պրուսիայի կառավարութիւնն դեմ:

Այդ իսկ կովի համար կառավարութիւնը փակեց թերթը և Մարքսը ստիպված եր արտասահման մեկնել:

Այստեղ Մարքսը ծանոթացավ տնտեսապես ավելի գարգացած յերկրների կյանքի հետ և ուսումնասիրեց Ֆրանսիական սոցիալիստների աշխատանքները և քաղաքաանտեսութիւնն ու միաժամանակ դիտում եր հեղափոխութիւն շարժման աճը Ֆրանսիայում: Այս բոլորը հանգեցին նրան վորոշ հայացքի, թե ի՞նչ ճանապարհով է ընթանում մարդկային հասարակութիւնն գարգացումը, և համոզեցին, թե այդ գարգացումը կվերջանա կոմմունիզմին անցնելով: Այստեղ նա հանդիպեց Ենգելսին (1820—1895 թ. թ.), վորը նույնպես Ռեյնի շրջանից եր, բայց իր ջանելութիւնն անց եր կացրել Անգլիայում, վորտեղ գործում եր հայրը: Ենգելսը տնտեսական տեսակետից ամենից գարգացած յերկրի կյանքի ազդեցութիւնը, վորն ունեցել եր քանվորական հետափոխական շարժում, ինքնուրույնաբար հանգել եր նույն հայացքներին, ինչ վոր Մարքսը:

1844 թ. Փարիզում հանդիպելով, նրանց համար պարզվեց իրենց հայացքների նմանությունը և այդ ժամանակվանից սկսվեց այն ընկերությունը և միաբան գործունեությունը, վորը միացրեց գիտական սոցիալիզմի յերկու հիմնադիրներին իրենց ամբողջ կյանքի ընթացքում:

Մարքսը և Ենգելսը ջերմ մասնակցություն են ցույց տալիս բանվորական կազմակերպությունների գործունեությունը և դառնում են գերման կառավարության հետապնդումներից փախած գերման բանվորների և հեղափոխական արհեստավորների մեջ այն ժամանակվա աշխատանքների կենտրոնական անձինք:

Մարքսը և Ենգելսը բոլոր ուժերը գործ են գնում եմիգրանտների ցրիվ յեկած խմբերի մեջ կապ հաստատելու:

Շուտով ցրված խմբակները միացան և 1847 թ. ծրնունդ առավ «Կոմմունիստների միությունը»: Միություն կանոնադրությունը վորոշում երնպատակը, վորպես «բուրժուազիայի կործանում, պրոլետարիատի տիրապետություն և նոր հասարակության վերակառուցումն առանց մասնավոր սեփականություն»: Միությունը կարողացավ կոմմունիստական թերթի մի համարը հրատարակել, վորի վերառություն մեջ դրված էյին՝ «Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք»:

Նոր միություն համար իբրև ծրագիր՝ Մարքսն, Ենգելսի աշխատակցությամբ, գրեց «Կոմմունիստական Մանիֆեստ»ը, վորը լույս տեսավ 1848 թ. հեղափոխության նախորդակին:

Յերբ Գերմանիայում, 1848 թ. Ֆրանսիայի դեպքերի ազդեցությամբ, ճայթեց հեղափոխությունը, Մարքսը և միություն մյուս անդամները վերադարձան Գերմանիա: Այստեղ նրանք ցրվեցին ամբողջ յերկրում և հեղափոխական աշխատանք էյին կատարում: Իսկ ինքը Մարքսն ըսկըսեց խմբագրել իր ծննդավայր Ռեյնի շրջանի լրագիրը «Նոր Ռեյնի թերթ» անունով, վորն ուներ հեղափոխական մեծ նշանակություն. թերթը միակն եր, վորը ճշտորեն

ցույց եր տալիս հեղափոխական դեպքերի ընթացքը և հեղափոխական գործի անգավաճան պաշտպանությունը: Յերբ հեղափոխությունը խորտակվեց, Մարքսը փախավ Լոնդոն, ուր և ապրեց մինչև մահ: Այստեղ նա հսկայական աշխատանք կատարեց գանազան նյութերի ուսումնասիրությամբ արդյունատերություն դրություն մասին, բանվոր դասակարգի կյանքի մասին և վերջիններիս հիման վրա գրեց, բոլորովին անգնահատելի և անգուգական նշանակությամբ, իր աշխատանքը՝ «Կապիտալ»: Տասնյակ տարիներ աշխատելով նրա վրա, կարողացավ ցույց տալ, վոր հենց կապիտալիստական հասարակության գոյությունը հիմնված է կապիտալիստների կողմից բանվորների շահագործման վրա:

Մարքսը միաժամանակ մասնակցում եր նաև հեղափոխական շարժմանը և 60-ական թվականներին առաջ յեկավ, վորպես Բանվորների Միջազգային Ընկերություն ղեկավար:

Կարիքը միշտ ել անբաժան է յեղել պրոլետարիատի մեծ ուսուցչից և հսկայական աշխատանքը, միացած կյանքի ծանր պայմաններին, 1883 թ. գերեզման իջեցրեց նրան:

Առաջին անգամ Մարքսի և Ենգելսի կարծիքները պարզ և վորոշ արտահայտվեցին «Կոմմունիստական Մանիֆեստ»-ում:

Ամենից առաջ այնտեղ ասված է, վոր ամբողջ մարդկություն պատմությունը դասակարգերի կռիվ է յեղած: «Ճնշողներն ու ճնշվողներն կռվում էյին, վորն ամեն անգամ ավարտվում եր հասարակության հեղափոխական վերաշինությամբ»: Նույնն է իրենից ներկայացնում նաև այժմյան դասակարգերի՝ պրոլետարիատի և բուրժուազիայի, կռիվը:

Անցյալում բուրժուազիան ունեցել է շատ յերախտիքներ. նա յե մեքենաների գործածելն սկսել, ֆաբրիկաներ և գործարաններ շինել, ստեղծել բազմամարդ քաղաքներ, բաց է թողել ծովերի վրա շոգենավեր և անց է կացրել

յերկաթուղիներ: Սրանց շնորհիվ և հնարավոր դարձել մը-
շակել հսկայական մթերքներ և տեղափոխել յերկրագնդի
բոլոր մասերը: Ամենահետադեմ ժողովուրդներն այժմ
առևտրական հարաբերություններն մեջ են ընկած:

Բայց արդյունաբերության և առևտրի աճն այժմ այն-
պիսի չափերի յե հասել, վոր բուրժուազիան ել չի կարող
զրուծյան տերը լինել: Արդյունաբերության զարգացման
մի քանի տարիներից հետո, սովորաբար, վրա յին հասնում
ձգնաժամերը, յերբ փակվում են Ֆաբրիկաներն ու գոր-
ծարանները, բանվորներն արձակվում են և ապրանքները
պահեստներումն են մնում անձախ վայր ընկած: Այս բո-
լորն առաջանում են կապիտալիստական անտեսության
անկարգությունից և անկազմակերպությունից, վորը ցույց
ե տալիս, թե անհրաժեշտ ե փոխել վերջինս կազմակերպ-
ված-սոցիալիստական անտեսությամբ:

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԵՐ.

Ինչպես վոր ինքը բուրժուազիան
յերևան յեկավ այն ժամանակ, յերբ իշ-
խանությունը պատկանում եր ազնվական—կալվածատերե-
րին, վորոնց ինքը բուրժուազիան տապալեց, ճիշտ այնպես
ել բուրժուազիայի տիրապետության ժամանակ աճում և
զարգանում ե մի դասակարգ, վորը պիտի դառնա նրա
զերեզմանափորը և նոր հասարակության ստեղծողը: Այդ
դասակարգը պրոլետարիատն ե:

Պրոլետարիատն անընդհատ մեծանում, լցվում ե քայ-
քայված գյուղացիներով և արհեստավորներով, վորոնք
խորտակվում են խոշոր արդյունաբերության մրցակցու-
թյունից:

Բուրժուազիայի դեմ ունեցած իր կովի ընթացքում
պրոլետարիատն անցնում ե մի քանի շրջաններ—«ըսկըզ-
բում բանվորները կովում են կենդ-կենդ», ապա համա-
խմբվում են մի Ֆաբրիկի բանվորները, հետո՝ արդյունա-
բերության մի ճյուղի և վորոշ շրջանի»: Արդյունաբերու-
թյան աճի հետ աճում ե պրոլետարիատը և ել ավելի
խելամուտ լինում իր շահերի գիտակցությանը. այդ ժա-

մանակ բանվորների և բուրժուազիայի ընդհարումը «ա-
վելի ու ավելի յե ընդունում հասարակության յերկու
դասակարգերի կովի բնույթ»:

Բանվորներն այժմ գործազուլներ են անում և ըս-
տեղծում իրենց կազմակերպությունները. թեև հազվա-
դեպ, բայց հաղթանակը բանվորներն են տանում և կոի-
վըն ավելի ու ավելի յե համախմբում բանվորներին: Վեր-
ջապես բանվոր դասակարգը համախմբվելով առաջ ե բե-
րում քաղաքական կուսակցություն, վորը քանի գնում՝
այնքան հզորանում ե: Վաղ թե ուշ պրոլետարիատի կոի-
վը փոխարկվելու յե բացարձակ հեղափոխության, յերբ
նա բուրժուազիայի բռնի տապալմամբ իր պետության
հիմքը կզնի:

ԿՈՄՄՈՆԻՍՏՆԵՐԸ.

Մանիֆեստն այդ բոլորից հետո
անցնում ե կոմունիստների և նրանց
գործունեյության բնութագման, այսինքն պրոլետարիա-
տի կուսակցության բնութագման: Կոմունիստները՝
առաջադան գունդն են բանվոր դասակարգի, վորոնք
պարզ գիտակցում են այն, ինչ զգում են մուծ կերպով
բանվորական մասսաները: Նրանց մոտավոր նպատակն ե՝
պրոլետարիատի կազմակերպությունը, բուրժուազիայի
տիրապետության տապալումը և քաղաքական իշխանու-
թյան զբաղումը: Նրանք, ուտոպիստների նման, չեն հնա-
րում այն միջոցները, վորոնցով պիտի հասարակությունը
վերաշինվի: Նրանց հայացքներն արտահայտում են այն
իրական պայմանները, վորոնց մեջ ընթանում ե դասա-
կարգերի կոիվը: Գրավելով քաղաքական իշխանությունը
պրոլետարիատն աստիճանաբար բուրժուազիայից կկտի
կապիտալները և աշխատանքի բոլոր գործիքները կկենտ-
րոնացնի իր պրոլետարական իշխանության ձեռքում:

Հարցեր յեվ համահարաբերություններ

1. Ի՞նչու մն եր կայանում կարլ Մարքսի գործունեյությու-
նը մինչև 1848 թ. հեղափոխությունը:
2. Ի՞նչու մն եր կայանում նրա գործունեյությունը հեղա-
փոխությունից հետո:

3. Ի՞նչ նշանակութիւն ունի Կ. Մարքսի ուսմունքի մեջ դասակարգերի կռիվը:

4. Վճիռ դասակարգերի մեջ և տեղի ունենում կռիվը կապիտալիստական հասարակութեան մեջ:

5. Ի՞նչո՞ւ յե Մարքսը պրոլետարիատին բուրժուազիայի գերեզմանափոր անվանում:

6. Ի՞նչպե՞ս և պրոլետարիատը բուրժուազիայի տապալմանը հասնում և Ի՞նչպե՞ս և այդ տապալումն իրականացնում:

7. Ի՞նչո՞ւ կոմունիստները պրոլետարիատի առաջավոր գունդն են:

Հ ա ն ձ ն ա Ր ա Ր Ո Ւ Ր յ Ո Ւ Ն I

Աշխատանքի գրքիս նյութերի հիման վրա հետևյալ թեմայով գեղիւցում կազմեցեք. «Մարքսի և սոցիալիստ-ուտոպիստների հայացքները կոմունիստական հասարակութեան անցնելու հարցի վերաբերյալ»:

Հ ա ն ձ ն ա Ր ա Ր Ո Ւ Ր յ Ո Ւ Ն II

Բաժանվեցեք խմբերի և վերցնելով ձեզ մատչելի լրագրներ, ընտրեցեք առանձին յերկիրների վերաբերյալ նյութեր, վորոնք ներկա կապիտալիստական պետութիւնների մեջ կտան դասակարգային կռիվ մասին պատկերացում:

Հ ա ն ձ ն ա Ր ա Ր Ո Ւ Ր յ Ո Ւ Ն III

Համագումար կազմակերպեցեք հետևյալ թեմայով «Դասակարգային կռիվի ձևերը ներկա կապիտալիստական հասարակութեան մեջ»:

Այդ համագումարի համար պատրաստեցեք ինքնուրույն հարցեր: Հանձնարարութեան մշակման ժամանակ կարդացեք Рубер-ի «От рабовладельческой общины к пролетарской революции», գրքում Կ. Մարքսի (267—272) և կոմունիստական մանիֆեստի բովանդակութեան բացատրութեան (276—279) մասին լրացուցիչ նյութերը:

§ II. ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ

ՅԵՎՐՈՊԱՅԻ ԱՐԴՅՈՒՆԱ-
ԲԵՐՈՒԹՅԱՆ ԱՃԸ 60-Ա-
ԿԱՆ Թ. Թ.

Հիշում ենք, վոր շարտիստական շարժման անկման պատճառն արդյունաբերական այն վերելքն էր, վորը հաջորդեց 1848 թ. ճգնաժամին: Իսկապես, հետևյալ յերկու տասնամյակում կապիտալիզմն իր զարգացման մեջ

շատ առաջ գնաց: Վոր միայն Անգլիայում, ուր խոշոր արդյունաբերութիւնը վերջնականապես հաղթել էր մանրին, այլ և մյուս յերկրներում կապիտալիզմը նկատելի նվաճումներ էր արել: Անգամ այն երկրները, վորոնք խոշոր արդյունաբերութեան զարգացման մեջ մասնակցութիւն չէին ունեցել, այժմ ընկել էին նույն ճամփեն, վորով վաղուց էր ընթանում Անգլիան. նման երկրներից կարելի յե մատնանշել Բելգիան և Շվեյցարիան:

Ահա Յեվրոպայի տնտեսական աճը բնութագծող մի բանի թվեր՝ յեվրոպական առևարի շրջանառութիւնը 1800 թ. մինչև 1850 թ. ավելացել էր 2 1/2 անգամ: Քարածուխի արդյունաբերութեան Անգլիայում 1800 թ. 10 միլ. տոննից 1864 թ. բարձրացավ մինչև 92 միլ. տոննի. ձուլած չուգունը 1854 թ. 1.390.000 տոննից 1864 թ. բարձրացավ մինչև 4.767.000 տոննի. յերկաթուղագծի յերկարութիւնը 1854 թ. 854 մղոնից 1860 թ. հասավ 12.700 մղոնի:

Առանձին երկրների տնտեսական աճն ավելի ու ավելի յե կապում նրանց մեկ-մեկու հետ: Միաժամանակ տարբեր յերկրների կապիտալիստների և ձեռնարկողների միջի կապի աճման հետ, այդ երկրների բանվոր դասակարգի միջի կապն էլ և զարգանում. բանվորները կամաց-կամաց համոզվում են, վոր իրենք ապրելով տարբեր երկրներում, այնուամենայնիվ, իրենց շահերը մեկ են:

ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ՓՈՆԱՆԱ- 1863 թ. անգլիական բանվորներ-
ԿՈՒՍԸ ՅԵՎ 1864 թ. ըր պատրաստեցին ուղերձ — դիմում
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28-Ի Ֆրանսիացիներին, վորի մեջ կոչ էյին
ՄԻՏԻՆԳԸ.

անում «ազգերի յեղբայրութիւն կազմել». «Ունենանք մեր համաժողովները, —ասվում էր ուղերձում,—քննելու համար մեծ հարցերը, վորոնց վորոշումներից կախված է ժողովուրդների յաղաղութիւնը»:

Ապա Անգլիայի բանվորները չմոռացան հիշատակելու և իրենց սեփական գործնական շահերի մասին, վորովհետև, յերբ անգլիական բանվորները կռիվ էյին սկսում

ձեռնարկողների դեմ, վերջիններս ոտարազդի՝ ֆրանսիական, բելգիական կամ գերմանական բանվորներ ելին բերում, վորոնք վատ պայմաններով ելին համաձայնվում աշխատել. այդ առթիվ անգլիացիները գրում ելին իրենց ուղերձի մեջ. «Բանվորական գործի համար անհրաժեշտ ե ժողովուրդների յեղբայրութունը— միայն այդ ժամանակ կվերանա ոտար յերկրների բանվորների միջի մրցումը. կապիտալիստներն ել հնարավորութուն չեն ունենալ ոգտագործել մեր մի մասին մյուս մասի դեմ և այդպիսով աշխատավարձը պակասեցնել»:

Ֆրանսիացիներն, ընտրելով հատուկ պատգամավորութուն, հանձնարարեցին նրան տանել ուղերձ— պատասխանը, վորի մեջ գրում ելին. «Մենք, բոլոր յերկրների բանվորներս, պիտի միանանք և անխորտակ պատենել պիտի կանգնենք այն իրական կարգերի դեմ, վորոնք սպառնում են ամբողջ մարդկութունը բաժանելու մի կողմից սոված և գազանացած մարդկանց մասսայի և մյուս կողմից՝ մի խումբ գրամական սուղերի և չինական չաղացրած անասունների»:

Պատվերակների ընդունելության, ինչպես և պատասխան-ուղերձը լսելու համար սուրբ Մարտիրոսի սրահում 1864 թ. սեպտեմբերի 28-ին միտինգի հավաքվեցին: Այդ միտինգում վորոշվեց ընտրել մի կոմիտե, վորը կիրակա-նացնի Միջազգային պրոլետարների համախմբման ցանկությունները: Այդ կոմիտեյի մեջ, բանվորական շարժման այլ առաջնորդների թվում, ընտրվեց նաև կարլ Մարքսը: Հեղափոխական բանվորական շրջաններում նա այդ ժամանակ մի հանրահայտ անձնավորություն եր, վորի համար և նա կանչվել եր միտինգին և ընտրվել միտինգի պրեզիդիումի մեջ:

ՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ
ՄԱՆԻՖԵՍՏ ՈՒ ԿԱՆՈՒՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ.

Նոր կազմակերպությունն ստացավ «Միջազգային բանվորական ընկերութուն» անունը. (նա հայտնի յեր 1-ին Ինտերնացիոնալի անվամբ): Ապա մշակվեց ամբողջ աշխարհի բանվորներին ուղղված մանիֆեստը և կանոնա-

դրությունը: Աշխատանքը շատ եր դժվար, վորովհետև կոմիտեյի մեջ մտնում ելին զանազան հայացքների և համոզմունքների տեր մարդիկ: Այդ աշխատանքը մենակ կարող եր տանել Մարքսը, վորին և հանձնարարվեց. նա աշխատանքը փայլուն կերպով կատարեց: Մարքսն արտահայտեց ամենահիմնական պահանջները, վորոնց հետ բոլորն ել պիտի համաձայնվեին:

Ամբողջ աշխարհի պրոլետարիատին ուղղված մանիֆեստի մեջ Մարքսը մատնանշում եր, վոր թեև արդյունաբերությունը և առևտուրը 1848 թ. հետո շատ են զարգացել, այնուամենայնիվ, բանվոր դասակարգի մեծամասնության դրությունը չի լավացել. ընդհակառակը, կարելի չե նկատել հասարակության մի մասի հարստացումը և մյուս մասը՝ աղքատացումը: Այնուամենայնիվ, բանվորները կարողացան այդ ժամանակվա ընթացքում ձեռք բերել վորոշ հաջողություններ. այսպես, նրանք սկսեցին կազմակերպել կոոպերատիվ ձեռնարկություններ (կոոպերատիվները սկսվեցին կազմակերպվել գլխավորապես 40-ական թվականներին անգլիական բանվորների մեջ), վորով ապացուցում ելին, թե արտադրությունը կարելի չե կազմակերպել և վոշ վարձու աշխատանքի ու մասնավոր սեփականության շնորհիվ: Բայց յեթե կոոպերատիվները սահմանափակվեն փոքրաթիվ բանվորների ջանքերով, նրանք հնարավորություն չեն ունենալ ազատագրել բանվորությանը: Վորպեսզի ամբողջ բանվորությունն ազատագրվի վարձու աշխատանքից և մասնավոր սեփականությունից, կոոպերատիվ արտադրությունը պիտի տարածել ամբողջ պետության մեջ, հետևապես, բանվորների առաջին գործն ե ձեռք բերել քաղաքական իշխանություն, վորի համար անհրաժեշտ ե ստեղծել քաղաքական կազմակերպություն:

Բանվորները մի կարևոր առավելություն ունեն նրանք շատ են և այդ շատությունը նրանց այն ժամանակ ոգուտ կրերի, յերը նրանք կենն կազմակերպված և համախմբված:

4/30/0-63



Այդ իսկ պատճառով մանիֆեստը վերջանում էր նույն խոսքերով, ինչ վոր «Կոմմունիստական Մանիֆեստը»՝ «Պրոլետարներ բոլոր յերկրներին, միացե՛ք»:

Մարքսի ձեռքով գրված կանոնադրության մեջ սովորում էր՝ բանվոր դասակարգի ազատագրությունը պետք է հենց իրենց բանվորների միջոցով կատարվի. բանվորների ամենամեծ նպատակը պիտի լինի բանվորների տնտեսական ազատագրությունը, իսկ այդ նպատակին կարելի չէ հասնել միմիայն քաղաքական կռիւ ոգնությամբ: Բանվորների ազատագրության խնդիրը պիտի լինի միաժամանակ նաև ամբողջ աշխարհի բանվորների նպատակը:

Ամբողջ կազմակերպության գլուխը պիտի համարվեր Գերագույն խորհուրդը, վորի մեջ ամեն մի յերկիր ունեւր իր ներկայացուցիչը՝ իր յերկրի քարտուղարին:

«ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ» 1866 թ. տեղի ունեցավ ժընեւում I Բնտերնացիոնալի 1-ին համաժողովը, ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԺԱՆԿԵՆՏՐՈՆ. վորտեղ և հաստատվեց Մարքսի մշակած կանոնադրությունը: Սրանից հետո մինչև 1871 թ. Ինտերնացիոնալն աճում և ամրանում էր. նա շատ շուտով դարձավ պրոլետարիատի ազատագրության կռիւի կենտրոնը: Գործադուլներին Ինտերնացիոնալը տեղաւն մասնակցություն ցույց տվեց կազմակերպելով, ընթացք տալով շարժանը: Այսպես, յերբ 1866 թ. տեղի ունեցավ Փարիզի բրոնզե դործների գործադուլը, բանվորները հենց իրենք գիմեցին Լոնդոնում գտնվող Ինտերնացիոնալի գլուխ Գերագույն խորհրդին, վորը բանվորներին նյութապես ոգնեց և նրանք ել հաղթանակ տարան:

Լոնդոնում յոթ ամիս տեղ գործադուլի ժամանակ Ինտերնացիոնալն ոգնեց, խանդարելով ռաւրյերկրյա բանվորների մուտքը, բանվորներին նյութական ոգնություն ցույց տրվեց և սրանցով նպաստեց բանվորների հաղթանակ տանելուն:

Յերբ Բելգիայում տեղի ունեցավ սոված ածխափոր ամբոխի գնդակահարումը՝ Ինտերնացիոնալն իր լրագրնե-

րի միջոցով սկսեց բողոքի ագիտացիան. բողոքի միտինգներ ե հրավիրում և վնասվածներին դրամական սգնություն ցույց տալիս. նա հանքափորների գործը հայտարարեց ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի գործ և, ընդհանրապես, նպաստում էր բանվորների համերաշխության հասկացողությանը, վորովհետև Ինտերնացիոնալը ցույց տված ամեն մի դրամական ոգնություն հնարավորեւր դառնում բանվորների մեջ նրա կազմակերպված դրամական հանդանակության շնորհիւ: Ինտերնացիոնալի ժողովրդականությունը քանի գնում՝ աճում էր. գործարանի և ձեռնարկության տերերը նրան համարում եյին անհասկանալի և հզոր հակառակորդ, իսկ բանվորները՝ ընդհակառակը, իրենց հովանավորն ու պաշտպանը: «Սպասեցե՛ք—ասում եյին տերերին զիջել չցանկացող բանվորները,—կրգա՞ւ Ինտերնացիոնալը»:

Ածխափորների գնդակահարությունից հետո Բելգիայի բազմաթիւ քաղաքներում առաջացան Ինտերնացիոնալի նորանոր բաժանումունքներ (սեկցիաներ), վորոնց մեջ մանում եյին բանվորական միություններն ամբողջությամբ: Այսպես եյին աշխատավորները մասսայորեն և տարերային կերպով ձգտում համախմբման:

Առաջին Ինտերնացիոնալի համաժողովներին քննվում եյին բանվորական շարժման բոլոր նշանավորագույն հարցերը: Ինտերնացիոնալը հաստատապես պնդեց բանվորների քաղաքական կռիւին մասնակցելու անհրաժեշտությունը և նկատեց տնտեսական դրության բարելավման կռիւի սահմանափակման անհնարին լինելը: Գործադուլն 1-ին Ինտերնացիոնալը համարեց բանվոր դասակարգի ձեռնարկողների զեմ մղած կռիւում անհրաժեշտ միջոց: Նա վորոշեց ձեռք բերել ամեն տեղ բանվորական աշխատանքի ութժամյա օր:

Ինտերնացիոնալն, արտահայտվեց նաև պրոլետարիատի գեպի պատերազմն ունեցած վերաբերմունքի մասին:

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՀԱՄԱԺՊՈՎՆԵՐԻՆ ՔՆՆՎՈՒՄ ԿԱՑ ՀԱՐՑԵՐԸ.

Այդ ժամանակ Յեվրոպան շատ եր անհանգիստ. մի քանի պատերազմներ էյին առաջացել, վորոնց պատճառներն աճող և ամրապնդվող բուրժուական պետութիւններն մեջ տեղի ունեցող կռիվն էր: Բանվորների անուսից Ինտերնացիոնալը պատերազմի դեմ ետանդուն բողոք հայտնեց հանձնարարելով աշխատավորներին, զինված նոր ընդհարումներ առաջացած դեպքում, կազմակերպել գործադուլներ «վորպես պատերազմ՝ պատերազմի դեմ» և, բացի այդ, ցույց տվեց, վոր նման պատերազմներին կարելի չէ «վերջ տալ միմիայն սոցիալական վերակառուցմամբ» այն է՝ կապիտալիզմի վոչնչացումով:

Ինտերնացիոնալը, վերջապես, իրեն ցույց տվեց, վորպես կոմունիստական կազմակերպութիւն, վորոշակի վճռելով բանվորների համար արտադրութեան միջոցների, արանապորտի և հողային հարստութիւնների մասնավոր սեփականութեան վերացման անհրաժեշտութիւնը:

Յեվրոպական յերկրները թեև իրենց անտեսական աճման մեջ շատ էյին առաջ գնացել, այնուամենայնիվ, զարգացման տարբեր աստիճանների վրա էյին դտնվում: Այսպես որինակ, Ֆրանսիայում արդյունաբերութիւնն անչափ թույլ էր, քան՝ Անգլիայում: Ֆրանսիայում դեռ ուժեղ և բազմաթիվ էր մանր արհեստավորութիւնը: Որինակ, Փարիզում ձեռնարկութիւնների 70% միայն ունեյին յուրաքանչյուրը 10 բանվորից վոչ ավել, իսկ 31% բոլոր ձեռնարկութիւնների՝ 2-ից մինչև 10 բանվոր. միջին հաշվով Փարիզում, անգամ 1860 թ., յուրաքանչյուր ձեռնարկութեան ընկնում էր 4 բանվոր:

Իհարկե, այս բանվոր-արհեստավորներն իրենց հայացքներով ու գաղափարներով տարբերվում էյին խոշոր արդյունաբերութեան մեջ աշխատող, և այդ իսկ պատճառով Մարքսի ուսմունքից շատ բան հասկացող, անգլիական բանվորների հայացքներից ու գաղափարներից:

Ֆրանսիացիներն ապրում էյին Պրուզոնի (1809—1865 թ.) իդեալներով, վորոնց մեջ շատ լավ արտացոլում էյին մանր արհեստավորների հայացքները: Նա քարոզում էր ձրի վարձ և տոկոսների վոչնչացում. անհրաժեշտ էր արհեստավորների համար կազմակերպել փոխանակութեան բանկ, վորտեղ արհեստավորներն իրար հետ կփոխանակեյին իրենց պատրաստած մթերքները: Պրուզոնի այս պահանջներն արհեստավորների այն ցանկութիւններին էյին համապատասխանում, վորոնք միշտ էլ փողի կարիք էյին զգում և ստրկանում իրենց ապրանքներն առնող վաճառականի ձեռքին: Պրուզոնը բարձրագոյ հայտարարում էր, թե սեփականութիւնը գողութիւն է, բայց արտադրական միջոցների հասարակական սեփականութիւն դարձնելու հակառակորդ էր, այսինքն՝ կոմունիզմի թշնամի:

Պրուզոնը և նրան հետևող պրուզոնիստները բանվորների քաղաքական կովին մասնակցելու հակառակորդներ էյին բացի այդ նրանք գործադուլների, բարձր աշխատավարձի և 8 ժամյա բանվորական օրվա կատաղի հակառակորդներ էյին:

Նման հետադեմ հայացքների դեմ պիտի կովեյին գլխավորապես անգլիական հառաջադեմ բանվորները Ինտերնացիոնալի առաջին համագումարներում: Պրուզոնիստների դեմ մղված կովի առաջնորդն էր Մարքսը, վորն Վին Ինտերնացիոնալի մանիֆեստը և կանոնադրութիւնը կազմելուց հետո յել շարունակում էր մնալ նրա վողին և նրա գաղափարական առաջնորդը: Նա նշանավորագույն հարցերի աթիվ կազմում էր զեկուցումներ, նախապատրաստում էր բանաձեւեր և այլն: Ինտերնացիոնալն առաջին յերեք համագումարներում ընդունեց գործադուլների անհրաժեշտութեան, 8 ժամյա բանվորական օրվա, քաղաքական կովի և, վերջապես, հասարակական սեփականութեան օրենք ձեռք բերելու անհրաժեշտութեան մասին վորոշումներ: Այս վորոշումների ընդունվելը պրո-

լեաարական մարքսիստական հայացքների հաղթանակն եր
ընդդեմ Պրուզոնին հետևող կես-արհեստավոր հետադեմ
բանվորներին:

Բ Ա Վ Ո Ւ Ն Ի Զ Մ

Հաղիվ եր Ինտերնացիոնալը Պրու-
զոնի հետևողների հախիցը յեկել, յերբ
ստիպված եր կուվի դուրս գալ նոր թշնամու դեմ. դա
ուուս հեղափոխական Բակունինն եր (1814 – 1876 թ. թ.),
վորը 1848 թ. մասնակցել եր գերմանական հեղափոխու-
թյանը: Բռնվելով գերման իշխանության կողմից և մահ-
վան դատապարտվելով, նա հանձնվել եր Նիկոլայ \ կայ-
սեր, վորը և նրան Պետրոպոլիսի բանտն եր ձգել.
հետո նա արտորվել եր Սիբիր, վորտեղից և փախել եր
արտասահման:

60-ական թվականներին նա նորից յերևաց Յեվրո-
պայում և վերսկսեց հեղափոխական գործունեությունը:

Նրա հայացքները խիստ աարբերվում էին Մարքսի
հայացքներից. ամենից առաջ Բակունինը չեր հասկանում
պրոլետարիատի նշանակությունը և բոլոր հույսերը դնում
եր հուսահատված աղքատների, քայքայված գյուղացիու-
թյան վրա: Նա յենթադրում եր, թե այդ դասակարգի
մեջ ե ամբարված «ապագա սոցիալական հեղափոխու-
թյան ամբողջ միտքն ու ամբողջ ուշժը»: Նա կարծում եր,
թե ժողովրդին պետք չեն՝ վնչ ագիտացիան, վնչ ել պրո-
պագանդան. «ժողովրդին քարոզ պետք չե, ասում եր նա,
այլ՝ խառնակչություն, բունտ անել. պետք ե այնպես
անել, վոր բունտերը հաջողվեն»:

Ահա այս կույր, տարերային և իր ճանապարհին ու-
մեն ինչ վոչնչացնող ժողովրդական բունտն եր համա-
բում նա իսկական հեղափոխություն: «Ամեն մի բունտ,
վորքան ել նա անհաջող լինի, միշտ ել ոգտակար ե...
Չատ-զատ բունտերը կմիանան, կկազմեն մի ընդհանուր
բունտ, ժողովրդական ապստամբություն, վորը համայ-
նավոչնչության կհասցնի»:

Բակունինը դեմ եր վոչ միայն բուրժուական պե-
տությանը, այլ և, կատարված հեղափոխությունից հետո,

հեղափոխական նվաճումների պաշտպանության համար
ստեղծված պրոլետարիատի պետությանը: Այսպիսով նա
պրոլետարիատի դիկտատուրայի թշնամին եր. նա դեմ եր
բոլոր տեսակի պետական իշխանություններին, այսինքն
անարխիստ, անիշխանական եր: Այնուամենայնիվ, հեղա-
փոխական գործունեյության մեջ նա կողմնակից եր գաղտ-
նի ընկերությունների կազմակերպության, վորոնք ունե-
յին յերկաթե միաձույլ, դաժան դիսցիպլինա, իրենց վե-
րը՝ մեծ իրավունքներով ոժտված, կոմիտեներ: Միմիայն
նման կազմակերպությունները, նրա կարծիքով, կարող
էյին լավ «խառնակել ժողովրդին»:

Մտնելով Ինտերնացիոնալ Բակունինը նրա ներսում
ստեղծեց իրեն գաղտնի կազմակերպությունը և ցանկա-
ցավ ոգտագործել Ինտերնացիոնալը իր խառնակչական
նպատակների համար:

Բակունինի և Մարքսի հետևողների մեջ կռիվ բուս-
վեց. պարզվեց, վոր Բակունինն ունի շատ հետևողներ.
դրանք գլխավորապես այն յերկրներից էյին, վորոնք նոր
էյին ընկել կապիտալիստական զարգացման ճամփեն, վոր-
տեղ քայքայված գյուղացիությունը պրոլետարանում եր
և այնպիսի անտանելի գրության մեջ եր գտնվում, վոր
պատրաստ եր խառնակել, բունտ անել, խորտակել ամեն
ինչ: Բելգիայի, Իտալիայի, Իսպանիայի և Շվեյցարիայի
նման թշվառացած մարդկանց մեջ Բակունինը և նրա
վարդապետությունը ժողովրդականություն էյին վայե-
լում: Ինտերնացիոնալի պառակտումը նման պայմանների
մեջ բոլորովին անխուսափելի յեր:

Յեվ իսկապես, Հաագայի համա-
ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՊԱ-
ՌԱԿՏՈՒՄԸ ՅԵՎ ԽՈՐ-
ՏԱԿՈՒՄԸ գումարում (1872 թ.) Բակունինը և
նրա կողմնակիցներն արտաքսվեցին Ին-
տերնացիոնալից. Բակունինին պաշտպանող յերկրների
կազմակերպություններն ել հեռացան Ինտերնացիոնալից
և ստեղծեցին իրենց միջազգային կազմակերպությունը:

Առանց այդ ել Մարքսի ստեղծած Ինտերնացիոնալը
այդ ժամանակ շատ եր թուլացել 1870 թ. Պրուսիայի և

Ֆրանսիայի մեջ բողոքաբանական պատերազմի պատճառով: Թեև Ինտերնացիոնալը պատերազմի դեմ էր, բայց առաջավոր և գիտակից բանվորները շատ ելին թույլ և փոքրաքանակ, ինչպես Գերմանիայում, Նույնպես և Ֆրանսիայում, վորպեսզի կարողանային պատերազմի առաջնառնել: Պատերազմը վերջացավ Ֆրանսիայի պարտությամբ, վորից հետո տեղի ունեցավ Փարիզի բանվորների ապստամբությունը, վորոնք և ազդարարեցին կոմմունան: Ապստամբությունը ճնշվեց և բուրժուազիան, արյան մեջ խեղտելով այդ ապստամբությունը, յերկար ժամանակով Ֆրանսիայի բանվորական շարժումը թաղեց. այսպես խորտակվեց Ինտերնացիոնալի հենարաններից մեկը:

Ինչ վերաբերում է Անգլիային, Ֆրանսիայի և Գերմանիայի մեջ յեղած կռվի շնորհիվ, շատ ոգտվեց և հասավ անտեսական փայլուն դրության: Այդ ժամանակ առանձնապես վարժ և կազմակերպված բանվորների դրությունն Անգլիայում բավականին լավացավ: Նրանք ձեռք ելին բերել իրենց արհեստակցական կազմակերպությունների պաշտպանության համար որենքներ, պարլամենտի ընտրություններին ձայնի իրավունք ելին ստացել (1867 թ.) և այս բոլորի շնորհիվ կորցրին հետաքրքրությունը դեպի Ինտերնացիոնալը: Այժմ այդ լավ ապահովված և վորոշ քաղաքական իրավունքներ ունեցող բանվորությանը Ինտերնացիոնալը շատ հեղափոխական թվաց, մանավանդ, յերբ նա ըսկսեց պաշտպանել Փարիզի բանվորների ապստամբությունը:

Այսպես չքացավ Ինտերնացիոնալի յերկրորդ նշանավոր հենարանը: 1872 թ. Հաագայի համագումարից հետո Ինտերնացիոնալն ետպես դադարեց գոյություն ունենալուց, թեև պաշտոնապես նա ցրվեց մի քանի տարի ուշ:

ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԲԱՇԱՆՄԱՆ ՅԵՎ ԽՈՐՏԱԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ. ՆՐԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին Ինտերնացիոնալի խորտակվելն ամենից առաջ նրանով է բացատրվում, վոր կապիտալիստական յերկրների աճն Յեվրոպայում այդ ժամանակ անչափ տարբերի մակարդակի վրա յեր գտնվում: Այդ իսկ պատ-

ճառով բանվորների գիտակցությունն էլ ամեն տեղ տարբեր էր. բոլորն էլ տարբեր ձևով ելին նայում Ինտերնացիոնալին և շատ քչերն ելին հասկանում Մարքսի իսկական միաբը՝ ստեղծել բանվորների միջազգային քաղաքական կուսակցություն: Մինչդեռ հենց սրանուամ էր կայանում Ինտերնացիոնալի նշանակությունը:

Մինչ այդ Յեվրոպայի գանազան յերկրներում գոյություն ունեյին գանազան բանվորական կազմակերպություններ՝ գաղտնի ընդհատակյա ընկերություններ, արհեստակցական միություններ. Ինտերնացիոնալը պետք է դրանց փոխարիներ, իբրև խոշոր քաղաքական կուսակցություն: Յեվ, իսկապես, նա հեղափոխականների խրմբակի կազմակերպություն չեր, այլ՝ մի կազմակերպություն, վորը բանվորական լայն մասսաներին էր համախմբում: Նա ցույց տվեց բանվորներին, թե ինչու համար պիտի կռվեն և ինչ միջոցներով պիտի այդ կռիվը վարեն: Բանվորների նպատակը պիտի լինի կոմունիզմը, իսկ կռվի միջոցները՝ քաջաքական կռիվ և պետական իշխանության գրավում: Միաժամանակ չպիտի մոռանալ իրենց դրությունը բարելավելու բանվորների մշտական կռվի մասին՝ բանվորական որվա կրճատման պաշտպանություն, ավելի բարձր աշխատավարձ և այլն:

Թեև Ինտերնացիոնալը 10 տարուց էլ պակաս ապրեց, այնուամենայնիվ նա այն նշանակությունն ունեցավ, վոր նախապատրաստեց ապագայում քաղաքական կուսակցություններ և բանվոր դասակարգի միջազգային միություն ստեղծելու հնարավորությունները, ցույց տալով այն ճանապարհը, վորով 50-ից էլ ավել տարի անց ընթացան կոմունիստական կուսակցությունները և III Ինտերնացիոնալը:

Հարցեր յեվ հանձնարարություններ

1. Տեսական ինչ դրության մեջ էր Յեվրոպան 60-ական թվականների սկզբին:
2. Վորոնք ելին բանվորական շարժումն աշխուժացնող և Բ. Մ. Ը. (Ինտերնացիոնալին) նախորդող դեպքերը:

3. Ի՞նչ բովանդակություն ունեւին Մարքսի գրած Բ. Մ. Ը. մանիֆեստն ու կանոնադրությունը:

4. Ինչո՞ւն էր կայանում և Ինտերնացիոնալի գործունեությունը և Բնչպիսի ազդեցություն գործեց նա 60-ական թվականների յերկրորդ կիսի վրա:

5. Ի՞նչ հիմնական խնդիրներն էլին վճռվում և Ինտերնացիոնալի համագումարներին:

6. Ի՞նչ հոսանքներ էլին պայքարում և Ինտերնացիոնալի ներքո:

7. Ի՞նչ է ներկայացնում իրենից Բակունինի վարդապետությունը:

8. Վոր՞նք են Ինտերնացիոնալի խորտակման պատճառները:

I «Աշխատանքի դրքիս» նյութերի համաձայն լուսարանեցեք կարլ Մարքսի գերն և Ինտերնացիոնալում:

II Նույն նյութերի հիման վրա պարզաբանեցեք, թե ինչո՞ւ Մարքսն անհրաժեշտ էր համարում կովել պրուչոնիստների և բակունիստների համոզմունքների դեմ:

III Պատրաստեցեք զեկուցում «Ի Ինտերնացիոնալի նշանակությունը» թեմայով:

Կազմակերպեցեք համագումար նույն հարցի առթիվ. վորոնեցեք և Ինտերնացիոնալի պատկերազարդման նյութեր 1924 թ. («Прожектор», «Огонек», և «Красная Нива») թերթերի մեջ:

I-ին Ինտերնացիոնալի առթիվ լրացուցիչ նյութեր կարդացեք Րուզեր-ի «От рабовладельческого общества», գրքի 259-267 յերեսները. ոգտագործեցեք նույն նյութերը ձեր բանավոր և գրավոր զեկուցումներին:

§ III. ՓԱՐԻՋԻ ԿՈՄՄՈՒՆԱՆ՝ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.

Դեկտեմբերի 2-ի պետական հեղաշրջումը, վորին շուտով հետևեց կայսրության ազդարարումը Ֆրանսիայում (այսպես կոչված յերկրորդ կայսրությունը), ետպես ինքնակալություն վերահաստատումն էր:

«Այն ժամանակներում, գրում է այդ շրջանի պատմագիրը, բավական էր քաղաքական մի հասարակ դրույց, վորպեսզի մարդ բանտարկության յենթարկվեր, իբրև կաս-

կածելի անձն: Կառավարությունը կարող էր չվախենալ հրապարակելուց և իր քմահաճույքով վարվել քաղաքացու ազատություն հետ: Կայսեր վորևե քաղաք մտնելու նախորդակին հանրապետական ձգտումների մեջ կասկածվող բոլոր բնակիչները կանխապես բանտարկվում էլին. ամեն տեղ մուտք էլին գործում լրտեսները»:

Այդ բոլորից ոգտվում էր խոշոր բուրժուազիան՝ բանկիրները, ֆարրիկանաները, գործարանատերերը և այլն. յերկրորդ կայսրության շրջանում ֆրանսիական արդյունաբերությունը արագ էր աճում: Ոտար ապրանքների ներմուծումը Ֆրանսիա վեծացավ 2¹/₂ անգամից ավել, իսկ ֆրանսիական ապրանքների արտահանումը արտասահման՝ 3 անգամից ավել. արտադրության տեխնիկան գգալապես կատարելագործվում էր. արտադրության մի քանի ճյուղերում՝ մանվածային, դերձակային և շինարարական, ձեռքի աշխատանքը խրկվում, փոխարինվում էր մեքենայով: Շատ ֆարրիկաներում, գործարաններում և արհեստանոցներում սկսեցին գործադրել շոգեշարժիչներ, վորոնց թիվը 10 տարվա ընթացքում շատացավ 1¹/₂ անգամ: Գարածուխի և անտրացիտի արտադրությունը այդ տարիներում մեծացավ 4 անգամ, իսկ յերկաթիներ և պողպատիներ՝ 3¹/₂: Նման արտադրական աճ կարելի յե նշանակել նաև արդյունաբերական ճյուղերում:

Ֆրանսիական մեծ հեղափոխու- ԳՅՈՒԷԱՅԻՈՒԹՅԱՆ ԴՐՈՒ- թՅՈՒՆԸ. թյունը գյուղացուսն տվել էր սեփականությունը նրա այն հողամասի վերաբերմամբ, վորը վորոշ զեպքերում յեկեղեցական և եմիգրանտների հողերի գնումներով էր մեծանում. բացի դրանից ամեն մի գյուղացի, համայնական հողերի բաժանման ժամանակ, իր բաժինն էր ստացել: Այդ գյուղացիների մեծամասնությունը մանր սեփականատերեր էլին, այնպես վոր 1862 թ. արգեն Ֆրանսիայում կային գյուղացիական 4¹/₂ միլ. մանր հողաբաժիններ և միայն 150 հազար՝ խոշոր: Պետական ծանր հարկերը և հողաբա-

ժինները փոքրությունն անհնարին էյին դարձնում տրնտեսութեան շահագործումը: Միշտ էլ հողի պակասություն եր զգացվում, մանավանդ վոր վճարվում եր նաև առաջուց գնված հողերի համար: Գյուղացու հողաբաժնի վրա կուտակվել եր հին և նոր հարկերի ծանր բեռը: Եսպես մանր գյուղացու սեփականությունը գրավ եր գրված բանկիրի մոտ, վորը և գյուղական հողաբաժնի իսկական տերն եր: Գյուղացին պարտավոր եր որ ու գիշեր աշխատել, վորպեսզի կարողանար իր դաժան պարտքատիրոջ պարտքերը վճարել:

Իսկ յեթե տարին անբերրի յեր (Ֆրանսիական հողատերերը նման աղետի մեջ էյին ընկել 4 տարի իրար վրա, 1853—1857 թթ.) կամ տավարի հիվանդություն կար կամ հեղեղ, այն ժամանակ ստիպված էյին նորից վաշխառվի ոգնությանը դիմել և ընկնել անյելանելի կացութեանն մեջ կորցնել հողը:

Գյուղացին վաշխառուների և բանկիրների կողմից կրկնակի շահագործման եր յենթարկվում և միշտ էլ դողում իր մի թիղ հողի համար:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԴՐՈՒ-
ՅՅՈՒՆԸ.

Արդյունաբերութեան զարգացումն ու աճն անխուսափելիորեն, առանձնապես Փարիզում, առաջ էյին բերում և բանվոր դասակարգի աճը: 1866 թ. Ֆրանսիայի մայրաքաղաքն ուներ 450 հազար բանվորություն, վորի մեծամասնությունը կազմում եր արհեստավորական պրոլետարիատը. իսկական Փարիզ-գործարանային պրոլետարիատ, համեմատաբար, քիչ կար:

Բանվորների աշխատավարձը բարձրացել եր, անգամ արդյունաբերութեան մի քանի ճյուղերում բավականին զգալի, բայց դրա հետ միտսին բարձրացել եր և կյանքի թանգությունը և դա յել այնքան խիստ, վոր բանվորի դրությունը, չնայելով աշխատավարձի բարձրացմանը, վատթարացել եր: Փարիզի բանվորները գանգատվում էյին, վոր կյանքի ընդհանուր թանգացումը, առանձնապես ու-

տելեգենն ու սենյակի վարձը, 12 տարվա ընթացքում, հավասար ե 50%-ին, իսկ տպագրողների աշխատավարձը, որինակ, ավելացել ե միմիայն 10%-ով: Հետևանքը 40%-ով ավելի յեր դժվարացել ապրուստը կայսրութեան որով, քան՝ առաջ եր: Բանվորական որը տեղում եր 12 և ավել ժամ: Բանվոր դասակարգն այլասերվում եր անչափ հյուժվելուց և ցածր վարձից: Չեռնարկություններում տիրում եր ծայր աստիճան ծանր կարգեր. տուգանումների և լրատեսութեան սխտեմն եր ծաղկել: «Արհեստանոցներում վոստիկանությունը ճիշտ նույն ձևով ե կազմակերպված, ինչ վոր՝ քաղաքներում. բանվորների մեջ կորել էյին և վատահոլություն, և հարաբերություն, վորովհետև անգամ պատերն ականջներ ունեյին»—գրում ե Պրուգոնը:

Նապալեոն III-ը հաճոյանում եր բանվորներին և աշխատում եր աննշան զիջումներով իր կողմը գրավել պրոլետարիատին: Մի կողմից թույլ եր տալիս բանվորական միությունների գոյությունը, մյուս կողմից՝ գործադուլներն եր ճնշում. համ կոոպերացիան եր խրախուսում, համ ել՝ կոոպերատորների համագումարներն արգելում: Բանվորները ներկայացուցիչներ ունեյին «բարեգութեների խորհրդներում» (ուրիշ խոսքով միջնորդ դատարան տերերի և բանվորների մեջ), բայց իրենք այդ խորհուրդները զբաղում էյին պետութեան հոգատար հսկողութեան տակ:

Զնայած Նապալեոն III արած զիջումներին, բանվորները չէյին կարող վատահել ամեն մի ազատ միտք ու խոսք հետապնդող վոստիկանական պետութեան դլխին կանգնածին: Առաջավոր բանվորներն անցան Բանվորների Միջազգային Ընկերությունը (Վ Ինտերնացիոնալը): Ինտերնացիոնալն էլ եր պետութեան կողմից հարձակման յենթարկվում. վոստիկանական հետապնդումներն էլ ավելի հետաքրքրություն և համակրանք առաջ բերին բանվորական մասսաների մեջ դեպի Ինտերնացիոնալը: 1868—1871 թվականներին աճում ե նրա անդամների թիվը և Ֆրանսիական սեկցիա-

ների մեջ ամրանում է այն հոսանքը, վորը ձգտում էր խորատակել կայսրութիւնը և փոխարինել «սոցիալական հանրապետութեամբ»: Վորքան աճում են պետական հետապնդումները, խուզարկութիւններն ու ձերբակալութիւնները Բանվորների Միջազգային Ընկերութեան անդամների վերաբերմամբ, այնքան ինտերնացիոնալիստների հեղափոխական տրամադրութիւնը պայծառանում, բոցավառվում է: 1868 թ. աժառն ու աշնանը Փարիզում տեղի յեն ունենում բանվորական մեծ միտինգներ, վորտեղ հաջողութեամբ դուրս են գալիս Ինտերնացիոնալի ֆրանսիական ղեկավարները:

Մյուս կողմից արդյունաբերական ճայթող ճգնաժամը, վորը խիստ կերպով վատացրեց բանվորների դրութիւնը, ել ավելի սրեց ձեռնարկողների և բանվորների մեջ յեղած դասակարգային կռիվը: Բանվորական որերի թիվն էր կրճատվում և աշխատավարձը պակասեցնվում և այժմ բանվորների ամենամահաբաժնու կարիքները—անունդ և սենյակ, չէին բավարարվում: Մկովեց յերկարատև և փոթորկոտ բանվորական գործադուլը (1868—1870 թ.թ.):

Մեծ նշանակութիւն ունեն և այն փաստը, վոր գործադուլները դադարել էին միմիայն տնտեսական բնույթ կրելուց և ստացել էին նաև քաղաքական նշանակութիւն: Նապալեոնի կառավարութիւնը անյերկբայորեն անցավ ֆարքիկանտների և կապիտալիստների կողմը. նրանց կարգադրութեան տակ էր դնում զորք, վորոնք կրակում էին գործադուլավորների վրա և ձերբակալում էին գործադուլային կոմիտեյի անդամներին: «Բանվորների բարեկամ» ղիմակն ընկել էր թե Նապալեոնի և թե նրա միջնորդների ղեմքերից: Պրոլետարիատն իսկապես վոր դառնում էր կայսրութեան վտանգավոր թշնամին. գործադուլների արհեստակցական կազմակերպութիւնների և Ինտերնացիոնալի ազդեցութեան տարածվելու աճը—ակնբախ ցույց էին տալիս կառավարութեանը, վոր ֆրանսիական բանվորների հեղափոխական կամքն ամրանում է:

ՆԱՊԱԼԵՈՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ
ՎԱՆՃԱՆԸ

Գրութիւնը վատանում էր ան-

ընդհատ պատերազմների. պատճառով: Ֆրանսիան մասնակցում է Ղրիմի պատերազմին ընդդէմ Ռուսաստանի, ապա Նապալեոնը մասնակցում է իտալացիներին ազգային ազատագրութեան կովին ընդդէմ ավստրիացիների, բայց շուտով դավաճանում է զինակցին և Ավստրիային միշտը զիջումներ է անում:

Վերջապես 1870 թ. տեսնելով Պրուսիայի աճող հզորութիւնը մի կողմից և մյուս կողմից ել ցանկանալով արթնացող հեղափոխական ուժերի ուշադրութիւնը ներքին քաղաքականութեան հարցերից ուրիշ կողմ դարձնել, Նապալեոնը պատերազմ է հայտարարում գերման հարեվանին:

ՖՐԱՆՍ-ՊՐՈՒՍԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԸ

«Մենք պատրաստ ենք, — ասում

էր ֆրանսիական մարշալն Որենսդրական վարչութեան մեջ,—մենք ավելի յենք պատրաստ, քան յերբեիցե և յեթե անգամ պատերազմը տեի ամբողջ տարի, մեր ամեն ինչը պատրաստ է—անգամ զինվորի սրնքակալի վերջին կոճակը»: Իրականութեան մեջ վոչինչ պատրաստ չէր. գորահավաքը վատ էր կատարված. գորհպետներն իրենց գորամասերն էին վորոնում. չկային ընդունակ հրամանատարներ. հրետանին սաստիկ յեա էր մնացել վերջին տեխնիքական նվաճումներից, բերդերը վատ էին պաշտպանված, զորքի մատակարարման գործը և սանիտարական դրութիւնը բոլորովին վատ էին կազմակերպված: Հետևանքն այն յեղավ, վոր փոխանակ Բերլինում նախաճաշելու, ինչպես Բոնապարտի կողմնակիցներն էին յենթադրում, ստիպված յեղան զորքի մի մասի հետ պատերազմի դաշտից փախչելու, իսկ մյուս մասի հետ՝ թշնամուն անձնատուր լինելու:

Ս Ե Դ Ա Ն

Սեպտեմբերի 3-ին Ֆրանսիան

շմեցնող ղժբախտութեան մեջ ընկավ. ինքը, կայսրը, յերևակայելով իրեն ռազմական հանճար, Սեզանի տակ անձնատուր յեղավ 80-հազարանոց բանա-

կով: Յերբ այս անուր պարտութեան լուրը Ֆրանսիայի մայրաքաղաքը հասավ, Փարիզը պատասխանեց հեղաշրջումով՝ հայտարարվեց հանրապետութիւն: Նապալեոնը հայտարարվում է գահընկեց յեղած և իշխանութիւնն անցնում է Որենսդրական վարչութեան ներկայացուցիչներին կազմված ժամանակավոր կառավարութեանը: Այս ժամանակավոր կառավարութիւնը կոչվում էր «Ազգային պաշտպանութեան կառավարութիւն» կամ «Սեպտեմբերի 4-ի կառավարութիւն» (Սեպտեմբերի 4-ը՝ հեղաշրջման օր):

40 ՄՄՈՒՆԱՅԻ ՆԱԽԱՍՏ-
ՐԱՍՏՈՒՅՅՈՒՆԸ

Չեր անցել և մի ամիս այն մտմենտից; յերբ իշխանութեան գլուխն եր անցել «Ազգային պաշտպանութեան կառավարութիւնը», բայց արդեն շատերի համար պարզ էր, վոր նա չի իրականացնելու իր վրա զրված հույսերը: Դեռ ևս կայսերական կառավարութիւնը ստիպված էր ծառայութեան կոչել ազգային գվարդիային, իսկ հիմա պարզվեց, վոր հազարավոր գվարդիական բանվորներ և արհեստավորներ զինված էին և կազմակերպված: Նրանք վառվում էին թշնամու դեմ կովելու պապակով, բայց կառավարութեան ներկայացուցիչները չէին հավատում Փարիզի դիմադրական կարողութեանը: Նման հայտարարութիւնը պիտի վոր վատ ազգեր փարիզեցիները վրա, վորոնք անհզորեն պատրաստվում էին մայրաքաղաքը պաշտպանել և անգամ՝ դիմանալ մինչև վերջին շունչը: Ազգային գվարդիան առաջարկում էր միջոցներ ձեռք առնել քաղաքի պաշարման ժամանակ պարենը արգարացիորեն բաշխելու համար — իսկ կառավարութիւնը գտնում էր, վոր քաղաքը, միևնույն է, յերկու շաբաթից հետո, սովից չմեռնելու համար, պիտի անձնատուր լինի: Առաջ խաղացող թշնամու դեմ ամեն մի բոպեն էլ թանգ էր, իսկ իշխանութեան ներկայացուցիչները աններելի դանդաղում էին: Քաղաքային խորհուրդների (կամմունաների) հայտարարված ընտրութիւնները զանազան պատրվակներով հետաձգվում էին:

Մտնում էին, թե յերկրի գլխին իշխողը վոչ թե «ազգային պաշտպանութեան կառավարութիւնն» է, այլ՝ «ազգային դավաճանութեան կառավարութիւնը»: Իսկապես, կառավարութիւնը հեղափոխականներին ամբելի յեր վախենում, քան՝ պրուսացիներին: Ռազմական մինիստր և Փարիզի գեներալ-նահանգապետ Տրոշյու կայսերական իշխանութեան կողմնակիցն էր և չէր էլ ձգտում պաշտպանել հանրապետութիւնը. այդպես էլին մտածում և Ֆրանսիական զորքի գլուխն անցած մյուս զորապետները:

Դեռ ևս Ֆրանսիացիներն ունեյին Մեց բերդի 120 հազարանոց մեծ բանակը գորապետ Բագենի հրամանատարութեամբ, բայց այդ բանակը հանձնել էր դավաճան զորապետը բերդի հետ միասին: Յերկու օրից հետո Փարիզն իմացավ յերեք գժբախտութիւն՝ Մեցի հանձնելու, Բուրժի տակ ունեցած յորջ պարտութեան և խաղաղութեան բանակցութիւններ սկսելու մասին:

Սրան հետեց քայքայված յերկրի և առանձնապես պաշարված քաղաք՝ Փարիզի համար ծանր տանջանքների շրջանը: Չնայելով իր ցանկութեանը, կառավարութիւնը չկարողացավ ձեռք բերել պրուսացիներին վոչ խաղաղութիւն, վոչ էլ զինադատար և պատերազմը շարունակվում էր:

Դրութիւնն ամբելի սրվեց, յերբ գեկտեմբերի վերջին սկսվեց Փարիզի ումբակոծումը: Քաղաքի ալյուրը բոլորովին քիչ էր, ուստի նշանակեցին որբաժին, ինչպես սովի տարիներին այդ բանը յեղավ մեզ մոտ: Բաժինը յուրաքանչյուր շաբաթ քչանում էր ու քչանում և 1871 թ. հունվարի կիսին հոգուն սկսեցին տալ որական մեկ յերբորդական ֆունտ հաց: Պարենի խանութների դռների առաջ ժամերով կանգնած էին ծերերի, կանանց և յերեխաների յերկար հերթերը: Պաշարումը ձմեռվա ամիսներին էր. մարդիկ ցուրտ սենյակներին դուրս էին գալիս և կես որով կանգնում էին ցրտում, այնպես վոր մանր յերեխաները հերթում կանգնած իրենց մոր գրկումն էին

սառչում: Մթերքների գներն աճում էին սոսկալի արագութեամբ. չխոսելով յուղի, կաթի և գետնախնձորի մասին, անգամ ձիու, շան և կառվի մսերը թանգանում էին որեցոր: Ուտում էին խոշոր և մանր մկներ, անգամ կենդանաբանական այգու կենդանիներ: Քաղցն ու սովը իրենց յետևից բերին, առանձնապես բանվորական շրջաններում, համաճարակ հիվանդութիւններ: Մարդիկ մեռնում էին հազարներով. միմիայն հիվանդութիւններից վախճանվեցին հինգ անգամ շատ, քան՝ խաղաղ ժամանակ, չհաշվելով սպանվածներին և նրանց, վորոնք մեռնում էին պատերազմում ստացած վերքերից: Դրան միացավ և բնակարանային դաժան ճգնաժամը. և վորովհետև քաղաքը ումբակոծվում էր, ուստի քաղաքի ամբողջ շրջաններ քանդվել էին և ավերակներում վողջ մնացած բնակիչները պատասպարվում էին փախած հարուստների անտեր ձգված բնակարաններում:

Չնայելով այս բոլորին, փարիզեցիները հոգեպես ընկճված չէին. նրանք ձգտում էին յերկիրն ու մայրաքաղաքը պաշտպանել, չմտածելով հանձնելու մասին: Այդ ժամանակվա ընթացքում կառավարութիւնը վոչ մի լուրջ գրոհ, վոչ մի յեռանդուն փորձ չէր կատարել պատռելու համար պաշարման շղթան, վորը յերկաթե ողակով սեղմում էր Փարիզը:

Քաղաքի պարենավորման դրութիւնը վատանում էր. այդ որերին յեռանդուն աշխատող քաղաքական ակումբները սկսեցին ագիտացիա անել: Նրանք պահանջում էին «խուզարկութեան յենթարկել վոչ միայն վաճառականներին, այլև՝ մասնավոր մարդկանց, վորոնք պարենի պաշարն են թագցնում. գրավման յենթարկել բոլոր ապրանքները, առանձնապես յուղն ու ածուխը, և ձրի բաժանել հայրենիքի պաշտպաններին և նրանց ընտանիքներին»: Յե՛վ վորովհետև բոլորի համար պարզ էր, վոր կառավարութիւնը չի իրականացնի յերբեք այս պահանջները, ուստի այն համոզումն էր աճում. թե լավ կլինի քաղաքի պաշտպանութեան գործը հանձնել ազատ ընտրված կոմ-

մունային, ինչպես այդ բանը յեղավ Մեծ հեղափոխութեան ժամանակ: «Կոմմունան կվերադարձնի մեզ 93 թիվը, իսկ 93 թիվը՝ հաղթանակ.—ասում էին ակումբներում—յերևան կզան նույնպիսի վճռական և համարձակ մարդիկ, վորպիսիներն էին՝ Մարատը, Դանտոնը և Ռոբեսպիերը. գործպետներին կից կնշանակվեն հեղափոխական վստահելի պահակ—կոմիսարներ, վորոնք ամեն դավաճանութեան փորձի դեպքում կջարդեն նրանց գլուխը»:

Ազգային պաշտպանութեան կառուցման ջանքերը շտապեց Պրուսիայի հետ զինադադար կնքել, պարտավորվելով թշնամուն հանձնել 240 հազար զինվոր և նավաստի, վճարել 200 միլ. ֆրանկ և յերկու շաբաթվա ընթացքում Ազգային ժողով հրավիրել վերջնաանապես հաշուութիւն կնքելու համար. սա լրիվ կապիտուլիացիա յեր (հաղթողի գութն աղերսել):

Մի շաբաթվա ընթացքում պիտի տեղի ունենային Ազգային ժողովի ընտրութիւնները. հման կարճ ժամանակամիջոցում հեղափոխականները վոչ մի ագիտացիա չէին կարող տանել, քանի վոր պատերազմը դժվարացրել էր, հարաբերութիւն ունենալն ու հաղորդակցութեան ճանապարհներն էլ քանդվել էին: Անգամ փոստը 43 դեպարտամենտներում չէր գործում: Պարզվեց, վոր ընտրվել են հետադեմ և միապետական կուսակցութիւնների ներկայացուցիչները տիմար ու լքված գյուղական մասսաների, կալվածատերերի և խոշոր արդյունաբերողների ձայներով: Կազմվեց հետադեմ Ազգային ժողով և այդ «հանրապետական» ժողովում չէր կարելի անգամ «Կեցցե հանրապետութիւնը» վողջույնն արտասանել: Այս կոչը պատգամավորները բողոքը կատարութեան էր հասցնում: Այս Ազգային ժողովը, 1871 թ. մարտի 1-ին, հաստատեց խաղաղութեան նախնական ծանր և անպատվաբեր պայմանները Պրուսիայի հետ, վորով Յրանսիայից հատվում էին յերկու նահանգները՝ Նլզասն ու Լոտարինգիան, ավելի քան յերկու միլիոն ազգաբնակչութեամբ և յերկիրն էլ պարտավորվում էր հինգ միլիոն ֆրանկ պատերազմական տուգանք վճարել (կոնտրիբուցիա):

ՓԱՐԻԶԻ ՇԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԸ.

Դեռ ևս 1876 թ. սեպտեմբերի կիսին տարբեր շրջանների ժողովրդական ժողովներում ընտրվել էյին առանձին կոմիտեներ, վորպեսզի «հետևեն վոստիկանությանը, պարենավորման գործին և Փարիզի պաշտպանությանը»: Կազմակերպողների կարծիքով սրանք պետք է պրոլետարիատի և մանր բուրժուազիայի ցրված ուժերը համախմբելին և պատգամավորներ ուղարկելին 20 շրջանի կենտրոնական կոմիտեն. նրանց կազմի մեջ կային սոցիալիստներ և հեղափոխական սրամաղրությամբ քաղաքական գործիչներ:

Բայց 1871 թ. հունվարի վերջից ստեղծվում է մի նոր հեղափոխական կազմակերպություն — Ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտեն: Բոլոր 200 բառալիոնները (գումարտակ, ջոկատ) ընտրում են իրենց պատգամավորները, իսկ տարբեր զորամասերի պատգամավորներն ել ընտրում են կենտրոնական կոմիտե: Կենտկոմը Փարիզում մեծ համարում ուներ և պաշտոնական կառավարությունը սկսում է լրջորեն վախենալ, վորովհետև կոմիտեն ուներ և զինված ուժ:

Ինչ առիթներ չունեն Փարիզը հուզվելու և գայրանալու. Ազգային ժողովն իր նիստերը գումարում եր Փարիզից դուրս Ֆրանսիական թագավորների նախկին բնակավայր վերսալում. հեղափոխական քաղաքը տանում եր պաշարումը, կարծես թե դադարելով Ֆրանսիայի մայրաքաղաքը լինելուց: Ազգային ժողովը պահանջեց ամիջապես մուծել ժամանակն անցրած բոլոր պարտքերը և բնակարանային վարձը: Սա մի ծանր հարված եր փարիզեցիների համար. վոչ միայն աղքատներն էյին զրկվում պատասպարվելուց, այլ և տասնյակ հազարավոր մանր և միջնակ առևտրականներ և արդյունաբերողներ բոլորովին կքայքայվելին այս գեկրետից հետո. վորոշվել եր Ազգային գվարդիականներին ևս զրկել ոտճիկից (որական 1 1/2 ֆրանկ — մոտ 60 կոպ.): Վերջին կարգադրությունը թշվառության եր մասնում Փարիզի աղքատ գասին և քաղաքի զինված ուժին ել զրկում եր սնունդից:

Լուրեր էյին պատվում, թե Ազգային ժողովը մտածում է հանրապետությունը փոխարինել միապետությամբ, վորին կարելի յեր հավատալ, վորովհետև Փարիզի նահանգապետն ու զորահրամանատարն էյին նշանակվել միապետական ծառայության մեջ փառքի հասած և ժողովրդին ատելի անձինք՝ Վինուև և Որելլ: Ազգային ժողովը գործադիր իշխանության գլուխն եր կարգել Տիերին — բուրժուազիայի շահերի կատաղի պաշտպանին:

Տիերը և Ազգային ժողովը հասկանում էյին մայրաքաղաքի հեղափոխական կազմակերպություններին և առաջին հերթին Ազգային գվարդիային խորտակելու և ուժագուրկ անելու անհրաժեշտությունը, վորովհետև նրանք հրաշալի հասկանում էյին, թե կառավարության համար ինչպիսի վտանգն է իրենից ներկայացնում զինված բանվորների և արհեստավորների մասսան: Մոտալուև հեղափոխության վտանգ ավելի յեր ուժեղ, քան՝ դեպի հաղթող — պրուսացիներն «ւնեցած ատելությունը, ուստի Տիերի կառավարությունը խնդիրքով զիմում է պրուսական մինիստր Բիսմարկին՝ թուլատրել ֆրանսիական զորքերին անցնել Փարիզ ներքին կարգի պաշտպանության համար. Բիսմարկն ուրախությամբ համաձայնվում է, վորովհետև գերման, բանվորներին լավ դաս տալու համար, ցանկանում եր ֆրանսիական հեղափոխականների խորտակումը:

Ֆրանսիական կառավարությունն աշխատում եր իր ձեռքերը շուտ արձակել, ինչ գնով ել ուզում է լինի, թեկուզ Պրուսիայի հետ ամոթալի հաշտություն կնքելով, վորպեսզի իր ամբողջ հզորությամբ հարձակվի ներքին թշնամու վրա. իր գլուխը բարձրացրած բանվոր դասակարգն ու շատ սոցիալիստներ այս բանը հասկանում էյին:

Կառավարությունը վորոշել եր Ազգային գվարդիային զինաթափել և Մոմարտրի բարձրունքում գտնված թնդանոթները խլել, վորոնք հասարակության սեփականությունն էյին և ձեռք էյին բերված հանգանակությամբ:

ՇԵՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՓԱ-
ՐԻՋՈՒՄ.

Տիերը վորոշեց գործի անցնել-
զինվորներ ուղարկեց գիշերվա ժամը
3-ին Մոնմարտը և Բեյվիլ բանվորա-
կան թաղերը, վորտեղ բուլրների վրա տեղավորված էյին
Ազգային գվարդիայի թնդանոթները. քաղաքը հարձակման
չեր սպասում, հանգիստ քնած էր. փողոցները դատարկ
էյին: Կառավարական մի գորախումբ գորապետ Լեկոնտի
ղեկավարությամբ գրավեց թնդանոթները, բայց տանել
չկարողացավ:

«Մինչդեռ, պատմում ե կոմմունայի սլատմաբանը—
քաղաքն արթնանում էր: Ուտելիք գնելու խանութներն
շտապող կանայք առաջինն իմացան թնդանոթների գրա-
վումը և ազմուկ բարձրացրին: Փողոցները լցվեցին հուզ-
ված ամբոխով. յերևում են Ազգային գվարդիայի առաջին
խմբերը: Կանայք ընկնում են նրանց և Լեկոնտի գորքերի
մեջ, շրջապատում են զինվորներին և բռնելով հրացաննե-
րից ջերմորեն համոզում են չկրակել իրենց հայրերի և
յեղբայրների վրա: Ամբոխին առաջարկվում է ցրվել, բայց
նրանք չեն շարժվում. սպաներն արդեն յենթարկվում են
վիրավորանքների:

«Ընդհանուր հրճվանքի մեջ սկսվում է զինվորների,
Ազգային գվարդիականների և ժողովրդի յեղբայրանալը.
սպաները և ժանդարմները զինաթափվել են և բանտարկվել:
Բլրի ստորոտի Լեպիկ փողոցում, յերբ յեկած թնդանոթա-
ձիգները վերջապես պատրաստվում էյին տանել իջեցրած
թնդանոթները, ամբոխը ձիաների սանձերը կտրաում է և
ձիերին ել արձակում, վորից հետո գորքերը հեռանում
են: Թնդանոթները դարձյալ մնում են Ազգային գվարդի-
այի ձեռքին»:

Մարտի 18-ը Փարիզի համար անցավ հուզման մեջ.
գրգռված ամբոխը փողոցում ճանաչեց 1848 թ. բանվոր-
ներին դաժանորեն խաղաղացնողներից մեկին՝ գորապետ
Թոմային, վորին շրջապատեց և իր զինվորների ձեռքով
ձերբակալված գորապետ Լեկոնտի հետ մեկտեղ գնդակա-
հարեց:

Տիերը և մինիստրները հասկացան, վոր Փարիզում
գործը տանող են տվել և հավատարիմ մնացած գորքերի
հետ փախան Վերսալ:

ԱՋԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԵԾ
ՈՐԵՐԸ.

Վին կոմմունան, վորը տեսել էր
Մեծ հեղափոխությունը, նորից ճնշ-
վածների ազատագրության յեռացող
կուլի կենտրոնը դարձավ. նրա տանիքին ծառացել էր կար-
միր դրոշը: Ազգային գվարդիայի կենտրոնական կոմիտեն,
վորը մինչև կոմմունայի ընտրությունները դարձել էր ժա-
մանակավոր կառավարություն, բաղկացած էր «համարյա
բացառապես հասարակ բանվորներից և մանր չինովնիկ-
ներից, վորոնց $\frac{3}{4}$ իրենց փողոցից և արհեստանոցից դե-
նը չէյին տեսել» գրում է ժամանակակիցը: Տեղի յեր ու-
նեցել անսպասելի մեծ փոփոխություն տիրող դասակար-
գի, բանկիրների և գորապետների փոխարեն, մենք տես-
նում ենք իշխանության գլուխն անցած՝ սև աշխատանք
կատարող բանվորին, կազմարարին և խոհարարին:

Կենտրոնական կոմիտեն, հայտարարելով կոմմունայի
ընտրությունները, անգործ չէր նստած: Պարտքերի վճա-
րումները հետաձգվում են մի ամսով, տնտեսները գրկ-
վում են կենտրոններին բնակարաններից դուրս անել: Կեն-
տրոնական կոմիտեն վորոշ գումար բաց թողեց ոգնելու
ամենափնասված ընտանիքներին և լումբարգում գրավ գը-
րած իրերի ծախելն ել գաղարեցրեց. Ազգային գվարդիա-
յի որավճարները ($1\frac{1}{2}$ ֆրանկ) վերահաստատվեցին:

Քանի վոր Տիերը, քաղաքի պետական ամբողջ ապա-
րատը խարխլելու համար, տարել էր մայրաքաղաքի բո-
լոր պաշտոնյաններին, ուստի կոմիտեն պետական ապա-
րատն ստեղծելու առաջին քայլերն է անում: Վերջապես,
չնայելով Փարիզի ներքին և արտաքին բոլոր հակահեղա-
փոխականների գործողություններին, մարտի 26-ին տեղի
ունեցան կոմմունայի ընտրությունները:

ԿՈՄՄՈՒՆԱՅԻ ԸՆՏՐՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախընտրական տաք ազիսացիա
յեր տարվում: Ընտրական թուուցիկ-
ներն այսպես էյին ներկայացնում հե-

դաշըջման նպատակները. «ճանապարհ տվեք ազնվությանը, աշխատանքին և ճշմարտությանը. բացեք դռները, յերկիրը միակ ազատելու հնարավորություն ունեցող, զարգացած պրոլետարիատի, իսկական ժողովրդի և ձեր սխալներից և պարտություններից ազատ միակ դասակարգի առաջ»: Կենտրոնական կոմիտեն նախագրողաշնունմ էր ճորտամարտների և փառասերների, ինչպես և ունեվորների ընտրություններից, քանի վոր նրանք հազվադեպ են բանվորին, իբրև մարդ, իրենց յեղբայր ընդունում:

Փարիզի շրջաններից Կոմմունան ընտրվեց ընդհանուր ձայնավությամբ. ընտրվեցին 85 հոգի: Բայց չնայելով ընդհանուր ձայնավությանը, փաստապես, պրոլետարիատն ու մանր բուրժուազիան էյին Կոմմունան ընտրել: Պատերազմի սկզբին և Փարիզի պաշարումից առաջ շատ ունեվոր մարդիկ էյին փախել Փարիզից, իսկ ավելի շատ դասալքման էյին յենթարկվել հեղափոխական քաղաքից, հուզումների նախորդակին. վերջին դեպքում քաղաքից մեկնել էյին բուրժուական դասերին պատկանող մոտավորապես 100 հազար հոգի: Բացի դրանից հակահեղափոխական կամ չափավոր կուսակցություններին պատկանող 17 պատգամավոր էլ հեռացան Կոմմունայի կազմից. վերջ ի վերջո դասագան փոփոխություններից հետո Կոմմունայի կազմում կային՝

- Բանվորներ 27 հոգի (32,5%):
- Ծառայողներ և մանր չինովնիկներ 13 (17,7%):
- Ազատ արհեստի մարդիկ (ղերասաններ, նկարիչներ, բժիշկներ, ճարտարապետներ և այլն) 32 (38,5%):
- Մանր առևտրականներ և ձեռնարկողներ 4 (4,9%):
- Սպաներ 2 (2,4%):
- Անհայտ արհեստի մարդիկ 6 (6,72%):

Չնայելով վոր բանվորները բոլոր անդամների կիսից պակաս էյին, այնուամենայնիվ գերակշռող դերը, վոր խաղաց պրոլետարիատը մարտի 18-ի հեղափոխության և հետագա դեպքերի ժամանակ, դարձրեց Կոմմունան բանվոր դասակարգի գիկատատուրայի որդան:

Կոմմունայի ընտրությունը Փարիզը տոնեց փառահեղ կերպով:

Կոմմունայի անդամների մեծամասնությունը պատկանում էր «հակոբյաններին» — սա Ֆրանսիական Մեծ հեղափոխության

որինակով վոգեորվող հանրապետական — դեմոկրատական կուսակցություն էր: Այս կուսակցության անդամներն իրենց այդ հեղափոխության անմիջական շարունակողներն էյին համարում: Մրանց քաղաքական ծրագիրը նրա հայտարարված՝ Ազատություն, Հավասարություն և Յեղբայրություն սկզբունքների վրա յեր հիմնվում: Նրանց աչքի ընկնող ներկայացուցիչներն էյին՝ Դելեկլյուզ — հեղափոխական մեծ յերախտիքներով մի մարդ, վորը 19 տարի բանտ և աքսոր էր տարել, և Ֆելիքս Պիա՝ բազմամյա հեղափոխական և ընդհատակյա աշխատանքներ կատարած մարդը: Չնայելով նրանց դեպի Կոմմունան ունեցած անկեղծությանն ու անձնվիրությանը, այնուամենայնիվ հակոբյանները չէյին հասկանում մարտի 18-ի հեղաշրջման բանվորական բնույթը, շատ էյին հնով ապրում և ստրկորեն Մեծ հեղափոխությանը հեռուում, չգիտակցելով, վոր հարյուր տարվա ընթացքում Ֆրանսիայի կյանքում շատ փոփոխություններ էյին տեղի ունեցել:

Կոմմունայի մեջ հակոբյանների դաշնակիցներն էյին բլանկիստները — նշանակավոր հեղափոխական, կոմմունիստ, «հավիտենական բանտարկյալ» դեռ ևս 30 թվականներից հեղափոխական զազտնի ընկերություններ կազմակերպող Բլանկի կողմնակիցները: Նա և իր կողմնակիցները պաշտպան էյին հեղափոխական վճռական գործողության և զինված ապստամբության հեղափոխականների գիկատատուրա հիմնելու համար, վորը դեպի Կոմմունիզմ փոխանցումը կհեշտացներ: Ինքը Բլանկին այդ ժամանակ բանտումն էր. թեև նրա կողմնակիցների թիվը Կոմմունայում 8 հոգի էյին, այնուամենայնիվ նրանք նշանավոր դեր էյին խաղում, վորովհետև մեծ ազդեցու-

Թյուն ունեյին վոչ միայն անկուսակցական խմբակների, այլ և հակոբյանների վրա:

Կոմմունայի յերրորդ կուսակցությունը | Ինտերնացիոնալի անդամների խմբակն եր, վորոնք թվով 23 հոգի էյին, վորոնցից 15-ը բանվորներ էյին: Ամենահայտնիների անուններն են՝ կազմարար՝ Վարլենը, մեխանիկ՝ Աստի և Ավրիալ, ձուլող՝ Դյուլալ, ներկարար՝ Կլեման և Մալոն և ուրիշ փոսկերիչներ, կոշկակարներ, ատաղձագործներ և կարողներ: Արանց մեջ կային քաղաքական կովի հակա-ուսկորդ պրուգոնիստներ և մարդիկ, վորոնք համաձայն չէյին վոչ հակոբյաններին և վոչ ել ել բլանկիստներին: Նրանք իրավացի էյին, յերբ ընդգծում էյին, թե առանց անտեսական հարաբերությունների փոփոխության չի կարող բանվոր դասակարգի ազատագրությունը տեղի ունենալ, բայց նրանք չէյին ըմբռնում, վոր բուրժուազիայի դիմագրությունը կոտրելու և անտեսական անհրաժեշտ բարենորոգումներն իրականացնելու համար անհրաժեշտ է, վոր պրոլետարիատը բռնագրավի իշխանությունը:

ԿՈՍՄՈՒՆԱՅԻ ԳՈՐԾՈՒ-
ՆԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Նորընտիր Կոմմունան սկսեց իր աշխատանքները մարտի 28-ին, իսկ ապրիլի 2-ից Վերսալի թնդանոթներն սկսեցին Փարիզի վրա գնդակների անձրև թափել: Տիերը և Ազգային ժողովը միասին յելան ընդդեմ բանվորների կառավարության: Անհրաժեշտ եր, ինչ գնով ել լինի, խորտակել նրա հեղափոխական բուենը, թեկուզ և դրա համար անհրաժեշտ լիներ հեղափոխական մեծ քաղաքն այրել: Վերսալի սուշարման ողակն ավելի ու ավելի յեր նեղանում Փարիզի շուրջը և քաղաքն ել, կտրված մնացած ամբողջ Ֆրանսիայից, չեր սպասում վորևե տեղից ոգնություն: Առանձին քաղաքներում՝ Մարսելում, Լիոնում հոգուտ Փարիզի շարժում բռնկվեց, վորն արտահայտվեց տեղերում Կոմմունաներ հայտարարելով, բայց այդ ցաք ու ցրիվ վորձերը Վերսալի կառավարության կողմից արագ և դաժան կերպով ճնշվեցին:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱ-
ԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանվորական կառավարությունը պետք եր առաջին իսկ հերթին բանվորների կյանքի և աշխատանքի պայմանները լավացնել և են ել անպայման բանվորական կազմակերպությունների համաձայնությամբ: Իսկապես, Կոմմունան այդ հարցում գործում եր | Ինտերնացիոնալի Փարիզի սեկցիայի և գոյություն ունեցող մեխանիկների, մետաղագործների, անուշեղեն պատրաստողների և այլ արհեստակցական միությունների համաձայնությամբ: Կոմմունայի որով արհեստակցական շարժումն ընդարձակվում և ամբանում է ստեղծելով նորանոր միություններ:

Վոչ միայն Փարիզի սեկցիայի Դաշնակցական խորհուրդը (այսպես եր կոչվում Ինտերնացիոնալի տեղական կոմիտեն), այլ և Ինտերնացիոնալի Գերագույն խորհուրդը կապ եր պահպանում Կոմմունայի հետ և նրա ղեկավար Կարլ Մարքսն ել ջերմորեն հետաքրքրվում եր Ֆրանսիական հեղափոխական շարժման բաղդով: Բայց Փարիզի և Լոնդոնի հարաբերությունները դժվարացան սպրիլի 2-ից հետո, յերբ սկսվեց վերսալցիների զինված գրոհը Փարիզի վրա:

Փարիզի բանվորները հավատում էյին իրենց Կոմմունային և հույս ունեյին, վոր շահագործող տերերի դեմ ունեցած կռվում նա իրենց ցույց կտա հզորագույն պաշտպանություն, ուստի և նրանք անմիջականորեն կամ իրենց կազմակերպությունները միջոցով դիմում էյին Կոմմունային իրենց կարիքների համար:

Կոմմունային կից ստեղծված եր Աշխատանքի և Փոխանակության Հանձնաժողովը, վոր կազմված եր (բացի մի մարդուց) ինտերնացիոնալիստ բանվորներից: Այդ հանձնաժողովը բանվորական բոլոր կազմակերպություններին հրավիրում եր կապ պահպանել իրեն հետ:

Կոմմունայի ժամանակագրական առաջին խոշոր քայլը բանվորական հարցում պիտի համարել ապրիլի 16 ղեկըտող բարձիթողի արված արհեստանոցների մասին: «Ի նկատի ունենալով, վոր շատ արհեստանոցներ յերեսի վրա վայր

են ձգված տերերի կողմից, վորոնք չեն ցանկացել իրենց քաղաքիական պարտականութիւնները կատարել և հաշի չեն առել իրենց բանվորների շահերը. վոր շնորհիվ տերերի այդ վախկոտ փախուստի առաջացել է քաղաքի կյանքի համար անչափ կարևոր շատ ձեռնարկութիւնների դադարումը, վորով վտանգվել է և բանվորների բարորութիւնը— Կոմմունան վորոշում է, վոր բանվորական կազմակերպութիւններից կազմված Հանձնաժողովը գործնական քայլերի մասին ղեկուցում ներկայացնի, վորոնց ոգնութիւնը հնարավոր կլինի անհապաղ—բանեցնել արհեստանոցները, բայց այս անգամ արդեն վոչ թէ դասալիք — տերերի ուժերով, այլ նույն արհեստանոցում աշխատող բանվորների կօօպերատիվ միութեամբ»։ Այս կարևոր ղեկրեան իրենց ներկայացնում է առաջին, ճիշտ է, բավականին անհամարձակ, քայլը, վորով ձեռնարկութիւնները տերերից անցնում են բանվորներին։

Յերկրորդ խոշոր քայլն էր հացթուխ բանվորների գիշերային աշխատանքների արգելումը. յերբ այդ հարցով զբաղվող բանվոր Ֆրանկելին առաջարկեցին համաձայնութեան գալ անուշեղենի խանութատերերի հետ, նա պատասխանեց. «Յես միայն մի մանդատ եմ ստացել պաշտպանել պրօլետարիատի շահերը և, յեթէ հայտնի քայլն արդարացի չէ, յես ընդունում և իրագործում եմ կյանքում առանց տերերի հետ համագումարներով զբաղվելու»։

Կոմմունան արգելեց աուգանումներն ու հանումները բանվորների աշխատավարձից ինչպես մասնավոր, նույնպես և հասարակական ձեռնարկութիւններում։ Նա ձեռնարկեց աշխատանքի բիրտայի կազմակերպման. ղեկրեա հրատարակեց պարտադիր նվազագույն աշխատավարձի մասին, վորից պակաս վոչ վոք իրավունք չունեն վարձատել իր վարձու բանվորին. աշխատանքի պաշտպանութեան մի քանի միջոցներ ընդունեց. կազմակերպեց գներերի վերանորոգման և կարկատարելու լուսվրի արհեստանոցներում բանվորական հսկողութիւն և, վերջապես, ձեռնարկեց բանվորների աշխատանքի հետազոտմանը և կազմակերպմանը։

ԿՈՄՄՈՒՆԱՅԻ ՁԵՌՔ ԱՌԱՍ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Կոմմունան աշխատում էր, վորքան այդ հնարավոր էր, Պրուսիայի հետ ունեցած ծանր պատերազմի և վերսայցիների հետ ունեցած ել ավելի ծանր քաղաքացիական կռիվների քայքայման և աղքատութեան ծանր հետեւանքները թեթեացնել։ Հետաձգվեցին պարտամուրհակների և բնակարանային պարաքերի վճարումները. բռնագրավեցին փախած բուրժուաների բնակարանները և տրամադրեցին աղքատներին։ Վորոշվել էր վերադարձնել լուծբարգում զբաղ զբված աղքատների իրերը։ Ձեռնարկել էին հասարակական համաչափ ապահովութեան և աշխատանքային արտեղների ստեղծման։

Վոչնչացրել էին պաշտոնյա—չինովիկների բարձր ուժիկները. ամենաբարձր ուժիկն ամսական 500 ֆր. էր կամ, մեր փողով, 200 ռուբլի։ Մյուս կողմից էլ բանվորների և ծառայողների անչափ ցած—մասնավորապես ժողովրդական դպրոցների ուսուցիչների—ուժիկները՝ բարձրացրին։

Վերջապես, Կոմմունան բաժանեց յեղեցին պետութիւնից դադարեցնելով տերտերներին և կուսակրոն կազմակերպութիւններին զբամ տալը, միաժամանակ նրանց շարժական և անշարժ ունեցվածքը դարձնելով հասարակական սեփականութիւն։

ԿՈՄՄՈՒՆԱՅԻ ԴՐԱՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Տիերի կառավարութիւնը, Փարիսից հապճեպ փախչելու պատճառով, չէր կարողացել հետը տանել Ֆրանսիական պետական բանկը, վորովհետեւ ամբողջ հարստութիւնը տեղափոխելու համար կհարկավորվեր 60—80 կառք և բազմաթիվ ուղղման պաշտպանութիւն։ Այսպիսով Փարիզում մնացել էր, մեր զբամով, 700 միլ. ուրբլու վոսկու անագին հարստութիւնը։ Կոմմունան այս կապիտալը պիտի վերցնէր իր ձեռքը, վորի շնորհիվ նա կարող էր վոչ միայն հրաշալի կերպով վերսայցիների գեմ պաշտպանվել, այլ և՛ շվարեցնել իր թշնամի հարուստ արդյունաբերողներին և հողատերերին, զրկելով նրանց կենսական ներվից՝ դրա-

մից: Բայց Կոմմունան գրամը չեր վերցրել և բանկն ել անձեռնամխելի յեր մնացել, ուստի և Ազգային կառավարութեանը հաճաարիմ մնացած բանկի վարչութիւնը Փարիզը ումբակոծող վերսալցիներին եր ուղարկում քաղաքացիական կռիվը վարելու համար անհրաժեշտ միջոցները:

Կոմմունայի կառավարութիւնը վախենում եր ձեռք առլ յերկրի գրամական պաշարին, վորովհետև արգարացիորեն յենթադրում եր, թե նման քայլով իրենից կհեռացներ բուրժուական բոլոր շրջաններին: Կոմմունարները վախենում եյին, թե Փարիզի բանվորները մենակ չեն կարող հաջողութիւն ունենալ:

Այս անհամարձակութիւնը Կոմմունային շատ թանգ նսաց: Յեթե բռնադրավեր բանկը, նա իր ձեռքն առած կլիներ, իբրև գրավական, բուրժուակիայի տնտեսած ամ բողջ գրամը:

Փրանսիայում միմիայն բանվորներն իշխանութիւնը չէյին կարող իրենց ձեռքում պահել հենց միայն այն պատճառով, վոր նրանք շատ եյին հեռու ազգաբնակչութեան մեծամասնութիւնը կազմելուց: Ամբողջ յերկրում 1871 թ. բանվորների թիվը 3 միլիոնից ավել չեր. անհրաժեշտ եր, վոր նրանք հենվէյին բաղմամբիվ գյուղացիութեան վրա (16 միլ.), ստեղծեյին միութիւն, գոգում աղքատ գյուղացիութեան և պրոլետարիատի: «Առանց այդ միութեան, — ասում ե Վ. Ի. Լենինը, — կայուն չե դեմոկրատիան և անհնարին ե սոցիալիստական վերակազմութիւնը»: Նման միութեան եր ձգտում, ինչպես հայտնի յե, Փարիզի Կոմմունան, վորը չհասավ իր նպատակին շնորհիվ արտաքին և ներքին բնույթ կրող մի շարք պատճառների:

Վերսալի կառավարութիւնը, ինչպես և բուրժուակիան 1848 թ., ներշնչում եր տգետ և ընկճված գյուղացիութեանը, թե հանրապետականներն ու սոցիալիստները պատերազմի իսկական պատճառ յեղողներն են, թե նրանք են առաջ բերել, առանց այդ ել ծանր, հարկերի ա-

ԿՈՄՄՈՒՆԱՆ ՅԵՎ ԳՅԻ-
ՂԱՅԻՈՒԹՅՈՒՆԸ

վելացումը, թե նրանք Փրանսիայի համար ցանկանում են արյունարբու կառավարութիւն, վորը կվերակսի Պրուսիայի դեմ պատերազմը, կգրավեն գյուղացիների հողերը և կբաժանեն:

Կոմմունայի գործիչներն այնքան ել լավ չէյին հասկանում, թե վնրքան կարևոր ե գյուղացիներին բանվորական կառավարութեան կողմը քաշելը. չէյին հասկանում և այն, վոր առանց դրան անհնարին ե հեղափոխութեան հաղթանակը: Նրանց մեջ յեղած քիչ թե շատ հեռատեսները պնդում եյին Կոմմունայի իդեալները գաւառում պրոպագանդա անելու վրա:

Մամուլի տաղանդավոր աշխատակցուհի Անդրե Լեոն պատրաստեց մի շերմ դիմում գյուղի աշխատավորներին ուղղված, վորը վորոշվել եր ցրել ամբողջ յերկրում: Այդ դիմումից ոգապարիկները հարյուր հազար որինակով եյին թափում:

Բայց Կոմմունան շատ քիչ ժամանակ ուներ. նրա ուժերն ել կլանել եր քաղաքացիական դաժան պատերազմը: Չեր կարելի ուզմական դիրքից զինված պաշտպաններին վերցնել և ուղարկել գավառ պրոպագանդայի նպատակով: Դժվար եր ձեռքել Փարիզն ողակող Վերսալի և պրուսական զորքերի շղթան և անցնել գավառ:

Յեվ այսպես Կոմմունայի կոչերը գյուղին չհասան: Ձինվորական համազգեստ հագած գյուղացիութեանն ոգնում եր իրեն դասակարգային թշնամուն, խորտակելու համար իրեն անհասկանալի բանվորական կառավարութիւնը. այնուամենայնիվ, գյուղի աշխատավորութեանն ուղղած կոչը, ժամանակակից լրագրներից մեկի ասելով, մնաց հիշատակութեան արժանի ժողովրդի ամեն մի մանկան, կնոջ և տղամարդու համար:

Չանագան կուսակցութիւնների
ԿՈՄՄՈՒՆԱՅԻ ՎԱՆՃԱՆԸ
անձերից կազմված կառավարելուն անփորձ Կոմմունան թույլ ե ավել յերկու խոշոր սխալ, վորոնք և խորտակեցին իրեն. ինչպես մենք գիտենք,

պետական գանձարանի դրամը նա թողել էր թշնամու-
 ձեռքին և քաղաքի ուղղակի պաշտպանութեան գործն
 ել վատ եր կազմակերպել: Մարտի 18-ի հեղաշրջումից
 հետո փոխանակ միանգամից շարժվելու գեպի Վերսալ և
 շարժ ու փշուր անելու մոլորված թշնամուն, Փարիզի
 հեղափոխականները Տիերին ժամանակ տվին ուշքի գա-
 յուլ, ուժեր ժողովելու և մեծ քաղաքի վրա հարձակվելու:
 Փոխանակ ստեղծելու անհրաժեշտ ուժեղ ուղղակի կազ-
 մակերպութիւն, գործի մեջ զենելու Փարիզում ունեցած
 մարդկային ուժերը և զենքերի հարուստ պաշարը, կոմ-
 մունարները վատնում էին ժամանակն անպատու, դա-
 տարի խոսակցութիւնների, յերբեմն ել, անձնական հա-
 շիփների մեջ:

Իսկ այդ ժամանակ թշնամին կշռադատելով և հան-
 գրատութեամբ սեղմում եր վստահացող Փարիզի պաշար-
 ման ողակը, վորը քաղաքացիական կռիվ չեր ցանկանում:
 Տիերը համոզում եր գավառին, թե յերկրի մայրաքաղա-
 քում ավագակներ են նստել, վորոնք անելում և փողոց-
 ներում թալանում և սպանում են խաղաղ քաղաքացիներ-
 ըին, վառում են հասարակական շենքերը, իսկ ինքը՝ Վեր-
 սալը, զնդակահարում եր գերիններին և իր թնդանութներով
 ավերում եր Փարիզը: Կրակով բռնկված քաղաքում թագ-
 նված լրտեսների բանակը սպասում եր վերսալցիների
 համար դարպասները բացելու մոմենտին: Վերջապես մա-
 յիսի 21-ին լրտեսներից մեկը կառավարական գորքերի
 առաջ բացեց Սեն-Կլու դարպասը և վերսալցիներն ել
 գաղտագողի Փարիզ մտնելով սկսեցին նրա պաշտպաննե-
 ըի վերաբերմամբ այնպիսի դաժան կոտորած, վոր ա-
 րյունով փողոցեցին և դիակներով թաղեցին ամբողջ թա-
 դամասեր:

Ամբողջ մի շաբաթ շարունակվում եր կոմմունարների
 սիստեմի վերածված շարժը, սոսկալի «մայիսյան շաբա-
 թը», վորից հետո ամիսներով գործում էին զինվորական
 և արտակարգ դատարանները: Գնդակահարվեցին մոտ 20
 հազար մարդ, Վերսալի հաղթողների բանտերում ցրտից

և հիվանդութիւններից վախճանվեցին՝ մոտ յերկու հա-
 զար. դատարան էյին կանչվել 36 հազար մարդ, վորոն-
 ցից 13½ հազարը դատապարտվել էյին: Հարյուրավոր մե-
 տաղագործներ և քարտաշներ, հյուաններ և կոշիկակարներ,
 ներկարարներ և գրաշարներ, զերձակներ և ատաղձագործ-
 ներ, ծառայողներ և ուսուցիչներ, լրագրի աշխատակից-
 ներ և ժամագործներ ուղարկվեցին հավիտենական տա-
 ժանակիր աշխատանքների, անհատական կալանքի բերդի
 պատերում, բանտերում, աքսորում և տարեգրութիւն-
 ներում:

Կոմմունան հաղթվել եր. նրա
 ԿՈՄՄՈՒՆԱՅԻ ՆՇԱՆԱ- Կոմմունան
 ԿՈՒՅՅՈՒՆԸ թշնամիները Փարիզ խուժեցին «լողա-

նալով արյան լճակներում և քայլելով զեիակների վրայով»:
 Իսկ ինչ մնաց կոմմունայից: Նրա զեկրետները, նրա ի-
 դեալները, վորոնք մտան ամբողջ աշխարհի աշխատավոր-
 ների զիտակցութեան մեջ, վորտեղից այլևս չէյին կարող
 դուրս կորցել ամենադաժան պատիժները, ամենավայ-
 րագ անաբեկումը:

Մարքսը, Ենգելսը, Լենինը թանգ էյին զնահատում
 կոմմունան, վորպես բանվորական առաջին կառավարու-
 թիւն, վորը վորձեց սոցիալական հեղափոխութեան մեծ
 գաղափարներն իրականացնել և իրենից ներկայացնում է
 «մահացու սպառնալիք հին աշխարհի համար, վորը հիմն-
 ված է ստրկացման և շահագործման վրա»:

Կոմմունայի սոցիալիստական բանվորական բնույթն
 ստիպում է ճանաչել նրա նշանակութիւնը վոչ միայն
 Ֆրանսիայի հեղափոխական շարժման, այլ և ամբողջ աշ-
 խարհի աշխատավորութեան կովի պատմութեան մեջ:

«Կոմմունայի համար կովոզների հիշատակը մեծար-
 վում է վոչ միայն Ֆրանսիական բանվորների, այլ և ամ-
 բողջ աշխարհի պրոլետարիատի կողմից,— գրում է Վ. Ի.
 Լենինը,— վորովհետև կոմմունան կովում եր վոչ միայն
 վորև է տեղական կամ անգամ՝ ազգային խնդրի հա-
 մար, այլ և ամբողջ աշխատավոր մարդկութեան, բոլոր
 ստորացրվածների և վիրավորվածների ազատագրութեան
 համար»:

Հարցեր յեվ հանձնարարություններ

1. Ի՞նչ եր ներկայացնում իրենից Կոմիտեան իր կազմով:
2. Ի՞նչ խմբավորումներ եյին կազմում Կոմիտեայի ներսը:
3. Ի՞նչ արավ Կոմիտեան բանվորական քաղաքականութեան բնագավառում:
4. Ի՞նչ նշանավորագույն միջոցներ ձեռք առավ Կոմիտեան տնտեսական բնագավառում:
5. Ի՞նչ վերաբերմունք ցույց տվեց Կոմիտեան դեպի գանձարանը:
6. Ի՞նչպես եր պահում իրեն Կոմիտեան դեպի գյուղացիութիւնը:
7. Ինչ՞ից առաջացավ Կոմիտեայի խորտակումը:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՅՈՒԹԵՐ

ա) Գյուղի աշխատավորներին

«Յեղբայր, քեզ խաբում են. մեր շահերը միևնույնն են: Են, ինչ յես եմ պահանջում, ցանկանում ես և դու: Իմ ձեռք բերված ազատութիւնը կլինի միաժամանակ և քո ազատութիւնը: Քաղաքում նա, ով ամբողջ աշխարհի հարստութիւնն է արտադրում, զիմանում է և՛ հացի, և՛ շորի կարիքներին. նա տուն չունի և հույս ել չի կապում վորևէ մեկի ոգնութեանը: Մի՞թե նույնը չէ և գյուղում և մի՞թե միևնույն չէ, թե ով է շահագործողը՝ հարուստ կալվածատէրը, թե՛ արդէունաբերողը: Ինչպես յես, նույնպես և դու յերկար և ծանր բանվորական որվա ընթացքում անգամ այն չես ստանում, ինչ անհրաժեշտ է քո ֆիզիքական կարիքները բավարարելու համար: Դու, ինչպես և յես, դուրկ ես ազատութիւնից, ազատ ժամանցից, մտքի և սրտի կյանքից: Դու և յես դեռ ևս աղքատութեան ստրուկներն ենք:

«Սրդեն կես դար է, ինչ քեզ՝ գյուղացուդ, որավարձով աշխատող խեղճ մշակիդ, պնդում են, թե սեփականութիւնը՝ աշխատանքի սրբազան պտուղն է և դու յեվ հավատում ես: Դէհ, բաց աչքերդ և տես շուրջդ և դու կհամոզվես, վոր՝ սուտ է: Ահա դու ծերացել ես. դու աշխատել ես քո ամբողջ կյանքում, ամբողջ որեր յես անցկացրել՝ լուսաբացից մինչև գիշեր, բաճն ու մանգաղը ձեռքիդ և, այնուամենայնիվ, դու հարուստ չես և ձեռութեան հասակում մնացել ես առանց մի կտոր հացի: Ի՞նչ ամբողջ աշխատանքը ծախսվել է յերեխաների դաս-

տիարակութեան վրա, վորոնց քո ձեռքից խլում է զինվորագրութիւնը կամ թե ամուսնանալով, իրենց հերթին պիտի տանեն նույն բեռնակիր անասունի կյանքը, վորպեսզի այլարտեն այդ կյանքը այնպես, ինչպես և դու՝ աղքատութեամբ...»

«Դա անարդարութիւն է. ահա թե ինչո՞ւ յե Փարիզը հուզվում, պահանջում, ապստամբվում և ցանկանում է փոփոխել աշխատավորներին իշխելու իրավունքի հարուստներին տրվող որենքները: Փարիզը ցանկանում է, վոր գյուղացու վորդին ել ստանա նույնպիսի կրթութիւն, վորպիսին հարստի վորդին է ստանում և են ել ձրի: Փարիզը ցանկանում է, վորպեսզի չլինեն 20, 30 և 100 հազար ֆրանկ վճարվող պաշտոններ, վորը թույլ է տալիս մի տարվա ընթացքում ուտելու մի կարողութիւն մեկին, վորը կբավարարէ շատ ընտանիքներին: Փարիզը պահանջում է, վոր այն մարդիկ, վորոնք սեփականութիւն չունեն, մի գորշ հարկ ել չվճարեն, վորպեսզի վոչ մեծ կարողութիւն ունեցողները հարկազրկեն թե՛թե, իսկ հարկերի ամբողջ ծանրութիւնն ընկնի հարուստների վրա: Փարիզը պահանջում է, վոր 5 միլիարդը Պրուսիային վճարեն՝ պատգամավորները, սենատորները և բոնապարտիստները — պատերազմի հանցավորները և վոր դրա համար պիտի ծախել նրանց ունեցվածքները, ինչպես և թագավորի, վորն այժմ Յրանսիային պետք չէ, կարողութիւնները: Փարիզը պահանջում է, վոր արդարադատութիւնը ձրի լինի նրանց համար, ովքեր նրա կարիքն են զգում և վոր ժողովուրդն ինքն ընտրի համայնքի ազնիվ մարդկանցից դատավորներ:

«Փարիզը ցանկանում է հող՝ գյուղացիների համար, աշխատանքի գործիքներ՝ բանվորների համար և աշխատանք՝ բոլորի համար»:

Հանձնարարություն ըստ նյութի

Ուշադրութեամբ կարդացեք դրքի բնագրում «Գյուղացիութեան գրութիւնը յերկրորդ կայսրութեան և Կոմիտեայի ժամանակ» և կցված փաստաթուղթն ու բացատրեք՝ 1) ինչո՞ւ գյուղացիները չպաշտպանեցին Կոմիտեային հետագիւմ Ազգային ժողովի դեմ ունեցած կովում. 2) ինչպե՞ս պիտի գործեր Կոմիտեան, վորպեսզի գյուղացիութեան հետ կապ հաստատեր. 3) ինչ նշանակութիւն ուներ Կոմիտեայի գյուղացիութիւնից — կտրված լինելը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

§ I—ՈՒՏՈՊԻԱԿԱՆ ՅԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՍՈՅԻՍԱԼԻԶՄ . . . 3—11 յեր.

XIX դ. սկզբի սոցիալիզմը	3 »
Ռոբերտ Ուոլսնը և նրա ուսմունքը	3 »
Շարլ Ֆուրիեն և նրա ուսմունքը	5 »
Վիլհելմ Վեյտլինգ	6 »
Ուոլենի, Ֆուրիենի և Վեյտլինգի ուսմ. գնահատ.-ը	7 »
Գիտական սոցիալիզմը. Մարքս և Ենգելս	9 »
«Կոմունիստական Մանիֆեստ»-ը	11 »
Պրոլետարիատը	12 »
Կոմունիստները	13 »

§ II—ԱՌԱՋԻՆ ԻՆՏԵՐՆԱՅԻՈՆԱԼ 14—26 »

Յեվրոպայի արդյուն. աճը 60-ական թ. թ.	14 »
Ուղերձների փոխ.-ը և 1861 թ. սեպտ. 28-ի միտ.-ը	15 »
Նոր կազմակերպ. մանիֆեստն ու կանոնադր.-ը	16 »
«Բանվորության միջազգային ընկերություն»-ը	18 »
Ինտերնացիոնալի համաժող. քննված հարցերը	19 »
Հոսանքների պայքարն Ինտերնացիոնալի մեջ	20 »
Բակունիզմ	22 »
Ինտերնացիոնալի պառակտումը և խորտակումը	23 »
Ինտերնացիոնալի բաժանմ. և խորտ. պատճառը	24 »

§ III—ՓԱՐԻԶԻ ԿՈՄՄՈՒՆԱՆ՝ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ I-ԻՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 26—53 »

Յերկրորդ կայսրությունը	26 »
Գյուղացիության դրությունը	27 »
Բանվորների դրությունը	28 »
Բանվորական շարժումը	29 »
Նապոլեոնի արտ. քաղաքականությունը	31 »
Ֆրանս-պրուսական պատերազմը	31 »
Սեդան	31 »
Կոմունայի նախապատրաստությունները	32 »

Փարիզի պաշարումը	33 »
Պրուսիայի զինագաղաթը	35 »
Փարիզի հեղափոխ. կազմակերպությունները	36 »
Հեղափոխությունը Փարիզում	38 »
Ազատության առաջին որերը	39 »
Կոմունայի ընտրությունները	39 »
Կոմունայի կուսակցությունները	41 »
Կոմունայի գործունեությունը	42 »
Բանվորական քաղաքականություն	43 »
Կոմունայի ձեռք առնված կարևոր. միջոցները	45 »
Կոմունայի դրամական քաղաքականությունը	45 »
Կոմունան և գյուղացիությունը	46 »
Կոմունայի վախճանը	47 »
Կոմունայի նշանակությունը	49 »
Աշխատանքի նյութեր	50 »
Վրիպակներ	54 »
Բովանդակություն	55 »



ԿԱՐԴԱԼՈՒՑ ԱՌԱՋ ՈՒՂՂԻՐ

<u>Եջ</u>	<u>Տող</u>	<u>Տպված է</u>	<u>Պիսի լինի</u>
9 վերևից	6	Երկրների	Երկրների
10 ներքևից	3	ծննդավայր	ծննդավայր
11 վերևից	6	արդյունաբերական	արդյունաբերական
13 »	1	բուրժուազիայի	բուրժուազիայի
14 ներքևից	14	հասարակության	հասարակության
15 »	12,14,17	երկրների	Երկրների
21 վերևից	4	վարձ	վարկ
25 »	18	քաղաքական	քաղաքական
26 ներքևից	2	ղրույց	ղրույց
27 »	12	ճյուղերում	մի շարք ճյուղերում
28 վերևից	1	82	28
35 »	14	հրավիրել	հրավիրել
35 »	14	վերջնականապես	վերջնականապես
37 »	16	վտանգ ավելի	վտանգն ավելի
37 »	17	պրուսացիներն	պրուսացիներն
37 »	18	կառավարությունը	կառավարությունը
39 »	2	տանող են	տանուլ են
44 ներքևից	3	կարկատարելու	կարկատելու
44 »	9	ձեռնարկու- թյուններում	ձեռնարկություն- ներում
46 վերևից	16	գյուղացիությունը	գյուղացիությունը



Ծ Ա. Խ Վ. Ո Ւ Մ Ե Ն՝

„ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ“ ՍԵՐԻԱՅԻ՝
№ 2—Բանվորական շարժումներն Արևմտյան Յեվրոպայում.

Պրակ Ա.

I. Բանվորական շարժման I-ին քայլերը, II. Չարախղճը և
III. 1848 թ. հեղափոխությունը Ֆրանսիայում. Գինը . . . 30 Կ

№ 3—Բանվորական շարժումներն Արևմտյան Յեվրոպայում.

Պրակ Բ.

Գինը . . . 50 Կ.

Յերկու գրքիցն էլ գումարով և կանխիկ գնողն.-ին 20% զեղչ:

Շուտով սպագրության կհանձնվի՝

№ 1—Բուրժուական հեղափոխ. Ֆրանսիայում (1789 թ.)

ՊՈՏՐՍՍՏՎՈՒՄ ԵՆ՝

- Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորական շարժումները XIX-րդ դարում:
- 1905 թ. Ռուսաստանում և Անդրկովկասում:
- Յերկրորդ Ինտերնացիոնալը:
- Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանում (1917 թ.)
- Հոկտեմբերյան հեղափոխությունը (1917 թ.) և քաղաքացիական կռիվները Ռուսաստանում:
- Յերկրորդ Ինտերնացիոնալը (Կոմինտերն):

Յ Ե Վ, Հ Ե Տ Ա. Գ Ա. № №-Ն Ե Բ Ը

Սերիայի պահեստը՝ 94-դ աշխատանքային 7-ամյա դպրոց,
Тифлис, Коджорская ул. № 1, գիմել թարգմանչին: